



**Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան**

*հանրային քաղաքականության հետազոտությունների ծրագիր*

**Քովիդ-19 համավարակի ազդեցությունը  
բարձրագույն կրթության վրա**

(Երևանի պետական համալսարանի և  
Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի օրինակով)

Մխիթար Ռ. Գաբրիելյան  
Ազգագրագետ

Երեվան-2022

## Բովանդակություն

1. Ներածություն .....	3
2. Իրավիճակի նկարագրություն .....	6
3. Հետազոտական հարցեր, հետազոտության մեթոդաբանություն .....	9
4. Արդյունքների վերլուծություն .....	12
Ա. Միջազգային կարգավորումներ, կրթական քաղաքականություններ:.....	12
Բ. Հայաստանյան կրթության կառավարում, բուհերի, առանձին ֆակուլտետների մակարդակում կայացված, կայացվող որոշումներ: Բուն կրթական գործընթաց:.....	19
Գ. Կրթության որակ և մատչելիություն:.....	29
Ամփոփում .....	36
Առաջարկություններ .....	38
Աղբյուրներ և գրականություն.....	40

## 1. Ներածություն

Հայաստանի անկախության ավելի քան երեսուն տարիների ընթացքում քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային համակարգերն ու հարաբերությունները ենթարկվում են փոխակերպումների, որոնք միանշանակ գնահատականի չեն արժանանում:

Կրթական համակարգը, բարձրագույն կրթությունը ներառյալ, նույնպես ենթարկվել է արմատական փոփոխությունների. *հրաժարում կրթության խորհրդային մոդելից, հանրակրթության 12-ամյա մոդելի ներդնում, բարձրագույն կրթության 5-ամյա մոդելի փոխարեն բակալավրի և մագիստրոսի մակարդակների հաստատում, այլ փոփոխություններ:*

Ինչպես այլ ոլորտներում, կրթության փոփոխությունները, հանրային զգայունությամբ պայմանավորված, միարժեք գնահատականի չեն արժանացել:

«Խորհրդային թե՛ արևմտյան կրթական մոդել» խոսույթը, հատկապես անկախության առաջին տարիներին, ընկած էր կրթության շուրջ բոլոր քննարկումների ու բանավեճերի հիմքում: Ե՛վ կողմ և՛ դեմ փաստարկներն ունեին հիմնավորումներ: Կողմ փաստարկները հիմնականում խորհրդային կարոտախտի, անվճար կրթության, աշխատանքի, սոցիալական շարժունության հնարավորությունների կարևորման համատեքստում էին: Խորհրդայինի այսպիսի կարևորումը, որ ձևավորեց նաև բարեփոխումների հանդեպ դիմադրություն, պատահական չէր: Խորհրդային համակարգը գաղափարականացված էր, որի նպատակը նոր տիպի մարդ կերտելն էր: Կրթությունն ուներ հստակ քարոզչական-սոցիալական բաղադրիչ, որ մեծ հաշվով հանգում էր կրթված լինելով սոցիալական հիերարխիայի ամենաբարձր աստիճաններին հասնելու գաղափարին: Անցումային փուլ մտած ու դժվարությունների դիմակայող հայաստանյան հասարակությունը չէր ուզում հիշել, որ 1970-80-ական թթ. հավասարության, սոցիալական շարժունության, արդարության խորհրդային գաղափարները, համակարգի ճգնաժամով պայմանավորված, թվացյալ էին: Միջին և ավագ սերնդի ներկայացուցիչները հիշում են, որ 1970-80-ական թթ. կրկնուսույցների մոտ պարապելն առարկայից ու ֆակուլտետից կախված արժեք 700-1000 ռուբլի, իսկ բուհ ընդունվելը սկսվում էր մի քանի հազար ռուբլուց:

Անկախության առաջին տարիներին պահպանվում էր կրթության խորհրդային մոդելը, իսկ ճգնաժամի, պատերազմի, արտագաղթի, այլ բացասական

իրողությունների պայմաններում կրթական համակարգի վերափոխման խնդիրն առաջնային չէր:

Կրթության կառուցվածքային բարեփոխումները 1990-ական թթ. մեկնարկել էին միայն առանձին բուհերում: Դրանք համակարգային բնույթ ստացան ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի ընդունումից հետո (2004), որն ամրագրեց Բոլոնիայի հիմնարար սկզբունքների իրականացման, մասնավորապես, բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումների և ECTS-ի ներմուծման պահանջը համակարգային մակարդակով: Շրջադարձային փուլանիշ էր հատկապես 2005թ., երբ Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին, իսկ բարեփոխումների հետագա ընթացքն այնուհետև ուղղորդվեց ԿԳՆ կողմից մշակված միջոցառումների պլանով:

Սրան հաջորդած հինգ տարիները նշանավորվեցին Բոլոնիայի գործընթացի զգալի առաջընթացով և համակարգային մակարդակով Բոլոնիայի գործիքակազմի ներմուծմամբ: Լիսաբոնյան ճանաչման կոնվենցիային Հայաստանի միանալուց հետո (2004թ.) հիմնվեց Ակադեմիական ճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (2005թ.), ապա կատարվեց համակարգային անցում բարձրագույն կրթության երկաստիճան կառուցվածքին (2006թ.) և կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական ECTS համակարգին (2007թ.), «Էրազմուս-Մունդուս» ծրագրի միջոցով սկզբնավորվեց ուսանողական շարժունությունը Հայաստան-Եվրոպա ուղղությամբ (2007թ.): Ստեղծվեց մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (2008թ.), իսկ ասպիրանտուրայում համակարգային մասշտաբով ներմուծվեց հետազոտողի կրթական ծրագիրը՝ Բոլոնիայի երրորդ աստիճանը (2009թ.): Չնայած ձեռքբերումներին, այս տարիների բարեփոխումները վերաբերում էին հիմնականում բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և դեռևս չէին անդրադառնում կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին:<sup>1</sup>

Բոլոնիայի գործընթացի ընկալման հակասականությունը, նշված ու այլ գործոններով պայմանավորված, պահպանվել է մինչ այսօր:<sup>2</sup> Հակասական

---

<sup>1</sup>Մանրամասն տես՝ Մ. Գաբրիելյան, Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ//[Բոլոնիայի-գործընթաց-ուսանողակենտրոն-համակարգ-ՀՀ-երեք-ԲՈՒՀ-ի-օրինակով.pdf \(osfam\)](#):

<sup>2</sup> Դիտարկումները ցույց են տալիս, որ հակասական ընկալումների պատճառներից մեկը դասախոսների ու ուսանողների ոչ բավարար ծանոթությունն է Բոլոնիայի գործընթացին, որը անհամապատասխան է կրեդիտային համակարգի, միջին որակական գնահատականի մասին պատկերացումներով:

ընկալումներ ունեն բոլոր դերակատարները՝ ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ, կրթության կազմակերպիչներ. «*Ժամանակ-առ-ժամանակ այս գաղափարը (Բոլոնիայի գործընթաց-հեղ.) հարցականի տակ է դրվում առանձին ուսանողների, դասախոսների և ծնողների կողմից, ովքեր, թեկուզև ոչ բացահայտորեն, արտահայտվում են ի օգուտ սովետական մոդելին վերադառնալուն: ...Տպավորություն է ստեղծվում, որ ինչպես և բոլոնյան ռեֆորմների ամբողջ գործընթացի պարագայում, այնպես էլ որակի ապահովման մասով դրանց բաղադրիչների իրականացումը բարձրագույն կրթության իրական որակի վրա «համոզիչ» ազդեցություն չի թողել»<sup>3</sup> Այլ ուսումնասիրություններ նույնպես փաստում են այս իրավիճակը:<sup>4</sup>*

Չնայած խնդիրներին, տարբեր մասնագիտությունների սահմանափակ մրցունակությանը, աշխատաշուկա-բուհ կապերի թույլ լինելուն, *բարձրագույն կրթությունը Հայաստանում զարմանալի «տոկունություն» է հանդես բերում: 2020-2021* ուստարում բակալավրիատում և մագիստրատուրայում սովորողների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 80000 մարդ: Պետական բուհերում սովորողներից շուրջ 50000-ի ուսուցումը եղել է վճարովի: Սա այն դեպքում, երբ Հայաստանում վերջին տարիներին արձանագրվում է աղքատության աճ (աղքատ է բնակչության շուրջ 1/3-ը): Հանուն բարձրագույն կրթության դժվարությունները, որ հաղթահարում են հազարավոր ընտանիքներ, ցույց են տալիս, որ այն հասարակության մի հատվածի համար պահպանում է «պրեստիժայնության», ներկայանալիության սիմվոլի կարևորությունը: Պահպանվում են բուհ ընդունվելն ապահովող ոչ ֆորմալ մեխանիզմները (կրկնուսույցների ինստիտուտ), ընտանիքները մշակել են երեխաների բարձրագույն կրթության ստրատեգիաներ՝ խնայողություններ, պարտք, արտագնա աշխատանք: Ուսանողների մի մասը նույնպես ներգրավվում է այս ստրատեգիաներում՝ վարձը ինքնուրույն վճարելու համար: Կառավարությունն իր հերթին նպաստում է այս ստրատեգիաների տարածմանը, ընդունելով որոշումներ աշխատող ուսանողների ուսման վարձը եկամտահարկի միջոցով փոխհատուցելու մասին և դրա հիման վրա

---

<sup>3</sup> Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն/ Հաշվետվությունը պատրաստվել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության համար. ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն Բուդապեշտ, հուլիս 2013թ., էջ 12-15// [Microsoft Word - OSF HE report ARM 2 .doc](#):

<sup>4</sup>Տես՝ Բարձրագույն կրթության հիմնախնդիրները Հայաստանում.- Եր.: Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, 2019.- 62 էջ// [Higher Education Problems Perspectives.pdf](#):

փոփոխությունների կատարելով օրենքերում:<sup>5</sup>

Ուսանողների մեծ թիվը, բարձրագույն կրթության համար գործադրվող տարաբնույթ ստրատեգիաները ցույց են տալիս, որ գործ ունենք մտածողության ստերեոտիպերի հետ, որոնք ոչ միշտ են բխում կրթության ընձեռած իրական հնարավորությունների մասին պատկերացումներից:

Պաշտոնական տվյալների, բուհերի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի ու այլ տվյալների նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ կրթության որակի ու մատչելիության հարցերը ըստ էության չեն լուծել նաև կրթական վերափոխումները, չնայած ինստիտուցիոնալ մակարդակում՝ ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից դրանք դրված են հավատարմագրման գործընթացի պահանջների ցանկում:

Թվարկված և այլ պատճառներով, ըստ նախնական դիտարկումների ձևավորվել է հակասական իրավիճակ. մի կողմից հասարակությունը, ընտանիքը, անհատը կարևորում են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը, մյուս կողմից՝ ***անտեսում են կրթության որակի, որակյալ կրթությամբ պայմանավորված հետագա հնարավորությունների առկայությունը:***

## 2. Իրավիճակի նկարագրություն

2018թ. հեղափոխության հիմնական խնդիրներից մեկը պետք է դառնար կրթության ու գիտության ոլորտների արմատական վերափոխումը: Իրադարձությունները, սակայն, այլ կերպ զարգացան: Տարբեր բուհերում (Երևանի Պետական, Տնտեսագիտական, Շիրակի պետական համալսարաններ) սկսվեց կառավարման մարմինների ու ռեկտորների ընտրության երկարատև ցիկլ<sup>6</sup>,

---

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության Կառավարության 3 հուլիսի 2020թվականի N-1125-Ն որոշումը «ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»//<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144080>, Հայաստանի Հանրապետության 2020թ. մարտի 6-ի Օրենքը «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»// <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140533>: Այս փոփոխությունը ներկայացվում է որպես որակյալ, սակայն չկա որևէ վերլուծություն, որ այն կդիտարկեր կրթության որակի վրա ազդեցության տեսանկյունից: «Աշխատող ուսանողը» բուհում յուրահատուկ կատեգորիա է, որը ավելի մեղմ վերաբերմունք է ակնկալում, որովհետև «աշխատում եմ, որ ուսման վարձ վճարեմ»: Մա, իր հերթին, բերել է նրան, որ եկամուտներից չզրկվելու նպատակով բուհերը խուսափել են ուսանողներ հեռացնելուց, անկախ կրթության որակից, մասնագիտական պատրաստվածությունից, հաճախումներից ու այլ իրողություններից:

<sup>6</sup> Երևանի պետական համալսարանում ռեկտորի ընտրությունը կայացավ 2021թ. դեկտեմբերին, իսկ Շիրակի պետական համալսարանում 2022թ. փետրվարին:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը լուրջ հակազդեցության արժանացավ կրթական ու ակադեմիական միջավայրի կողմից, իսկ օրենքի որոշ հոդվածներ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվեցին հակասահմանադրական:

2020թ. բարձրագույն կրթության համակարգում անորոշությանն ու լարվածությանը գումարվեց ևս երկու կարևոր իրողություն. COVID-19 համավարակը և 2020թ. սեպտեմբերին սկսված Արցախյան 44-օրյա պատերազմը:

Համավարակն ու դրանից բխող արտակարգ միջոցառումները, որ ձեռնարկվեցին 2020թ. մարտից, փոխեցին բարձրագույն կրթության կազմակերպման մեխանիզմները: Բուհերը հաշված օրերի ընթացքում անցան հեռավար ուսուցման, չունենալով բավարար տեխնոլոգիական պատրաստվածություն և կրթական գործընթացի՝ բովանդակային տեսանկյունից կարգավորման հստակ մեխանիզմներ: Համավարակը լրջագույն մարտահրավեր էր ոչ միայն հայաստանյան բարձրագույն կրթության համար: Ամբողջ աշխարհում հազարավոր բուհեր կանգնեցին լրջագույն խնդիրների առաջ, որոնցից շատերը հաղթահարված չեն մինչ օրս ու ըստ նախնական գնահատականների, առաջիկա տարիներին ևս կշարունակեն ազդել կրթության վրա:

Արցախյան 44-օրյա պատերազմը նույնպես լրջագույն ազդեցություններ ունեցավ բարձրագույն կրթության համակարգի վրա. բարոյահոգեբանական լարված մթնոլորտը, ուսանողների ու դասախոսների շրջանում հարյուրավոր գոհերը, պատերազմի աղետալի հետևանքները, դեռ երկար են ուղղակիորեն ու անուղղակիորեն ազդելու կրթական գործընթացի ընթացքի ու բովանդակության վրա:

Այս և այլ ազդեցությունների արդյունքում բարձրագույն կրթության համակարգը մտավ իներցիոն փուլ, երբ առաջնայինն ընդամենը կրթական գործընթացը կազմակերպելն էր, այլ ոչ կրթության որակի, մատչելիության, բարեփոխումների, լայն առումով՝ կրթության բովանդակության հարցերը դիտարկելը:

Այսինքն, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անբարենպաստ գուգակցումներով պայմանավորված, առանց այն էլ բազմաթիվ խնդիրներ ունեցող համակարգը ստիպված է լուծել արտակարգ իրավիճակի՝ քովիդի ու պատերազմի ազդեցությամբ պայմանավորված որակապես նոր, անսպասելի ու անհետաձգելի լուծումներ կազմակերպող խնդիրներ:

ԲՀՀ-Հայաստանի աջակցությամբ իրականացված այս հետազոտության նպատակը որոշակի է. *ուսումնասիրել Քովիդ-19 համավարակի ազդեցությունը բարձրագույն կրթության վրա.*

- *ուսումնասիրել այն ազդեցությունները, որ ունեցել է համավարակր կրթության որակի և հատկապես մասշტելիության վրա,*
- *դիտարկել ֆորմալ և ոչ ֆորմալ, ինստիտուցիոնալ, այլ լուծումները,*
- *մշակել առաջարկություններ, որ վերաբերում են կրթության որակի ու մասշտելիության հիմնախնդիրներին և գոյություն ունեցող արդյունավետ լուծումները կրթական գործընթաց ինտեգրելուն:*

Հետազոտության նախապատրաստության և իրականացման փուլում, ծանոթանալով համավարակի՝ կրթական համակարգի վրա ունեցած ազդեցությունների գնահատականներին, ինչպես նաև զարգացումների միտումներին, ակնհայտ դարձավ, որ դրանք կարիք ունեն նոր տեսանկյուններից վերլուծվելու: Կարևոր է համարվում, օրինակ, որ անցումը հեռավար ուսուցմանը դիտարկվի ոչ միայն որպես մարտահրավեր, այլ հնարավորություն, զարգացումներն ու լուծումները վերլուծվեն համակարգի ինքնագնահատման և զարգացման ռազմավարությունների, գործողությունների վերանայման ու համալրման հնարավորությունների համատեքստում: Կրթության պատասխանատուները, դասախոսներն ու ուսանողները հրնթացս յուրացնում էին տարբեր հարթակներում շփումների, դասախոսությունների կազմակերպման, ինքնուրույն աշխատանքի՝ նախկինում չունեցած կամ չկիրառված հմտություններ, որոնցից շատերը գնահատվում էին որպես դրական:

Կարևոր է նաև, որ բարձրագույն կրթության համակարգը ինստիտուցիոնալ մակարդակում կարողանա հանդես գալ որպես մի կողմից սովյալներ հավաքագրող, համակարգող ու վերլուծող, իսկ մյուս կողմից՝ վերլուծությունների արդյունքում ձևավորված նոր մոդելների ներդրող՝ ներառականության, մասնակցայնության սկզբունքների ու գաղափարների կարևորմամբ: Հանրային արձագանքները, մասնագիտական քննարկումները, հրապարակումները, ցույց են տալիս, որ արտակարգ իրավիճակում որոշ լուծումներ (հեռավար ուսուցում, նյութերի մատուցման տարբեր տեխնիկաներ) ընդունվել են կրթական համակարգի շահառուների կողմից:<sup>7</sup>

Դասավանդման մեր փորձառությունը, համադրված ուսումնասիրությունների արդյունքների հետ, հիմք է տվել որպես հետազոտական կանխավարկած ձևակերպել թեզը, ըստ որի որոշ լուծումներ արդյունավետ էին հատկապես կրթության որակի և

<sup>7</sup> Տես՝ [Համավարակր բարձրագույն կրթության վրա ունեցավ և՛ վատ, և՛ լավ ազդեցություն. կրթության փորձագետ - YouTube](#); [Հեռավար կրթության կազմակերպումը COVID 19-ի պայմաններում | Heinrich Böll Stiftung | Tbilisi - South Caucasus Region \(boell.org\)](#):



մատչելիության տեսանկյունից և կարող են դառնալ կրթական համակարգի կարևոր բաղադրիչը ապագայում:

Ըստ այդմ, որպես հիմնական դիտարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- ինչպե՞ս են փոխվում կրթության որակն ու մատչելիությունը համավարակի ու ետպատերազմյան շոկի պայմաններում,
- ի՞նչ փաստաթղթային ձևակերպումներ են ստացել այդ փոփոխությունները (օրենսդրական, գործադիր, բուհական մակարդակներ),
- ի՞նչ առաջարկություններ են ձևավորել/ձևավորում կրթության շահառուները և ինչպիսին է այս ամենը կրթական գործընթացներում ինտեգրելու ներուժը:

### 3. Հետազոտական հարցեր, հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտական հիմնական հարցերը խմբավորվել են ըստ հետևյալ բաղադրիչների.

Ա. *ինչպե՞ս է բարձրագույն կրթությունն «արձագանքել» համավարակին*, ի՞նչ լուծումներ են մշակվել, որոշումների կայացումը արդյո՞ք եղել է մասնակցային, ներառական, ինչպես է իրականացվել արդյունավետության գնահատումը,

Բ. Ինչպիսի՞ն են եղել ինստիտուցիոնալ լուծումները,

Գ. Ինչպիսի՞ն է եղել դասախոսների ու ուսանողների վերաբերմունքը, ինչ առաջարկություններ են ներկայացվել, ինչպե՞ս են դրանք հավաքագրվել ու ընդհանրացվել:

Հետազոտության ընթացքում ըստ էության հաստատվեց, որ մինչ օրս բարձրագույն կրթության կարևոր խնդիրներից է ինչպես որոշումների կայացման, այնպես էլ բուն կրթական գործընթացում այլընտրանքի բացակայությունը /սահմանափակությունը: Այս վերլուծությունը, բնականաբար, չի հավակնում ամբողջական այլընտրանք ապահովելուն, ինչի համար անհրաժեշտ են ժամանակ և լուրջ, համախմբված, ինստիտուցիոնալ ու բազամասնագիտական ջանքեր:

Հետազոտության ընտրանքում ներառվել է երկու բուհ՝ Երևանի պետական համալսարան և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան:

Փաստաթղթերի ուսումնասիրության փուլում ուսումնասիրվել են նաև Պետական Տնտեսագիտական Համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի, այլ բուհերի վերաբերյալ նյութերը:<sup>8</sup>

Հետազոտությունն ունեցել է երկու հիմնական բաղադրիչ.

#### 1. Փաստաթղթերի վերլուծություն

Կրթական քաղաքականության, համավարակով ու 44-օրյա պատերազմով պայմանավորված կարգավորումների ուսումնասիրության փուլում նախապատվությունը տրվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդին:

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ բացի Հայաստանին վերաբերող նյութերից, կա բարձրագույն կրթության՝ համավարակով պայմանավորված խնդիրներին, առանձին երկրներում արձանագրված միտումներին վերաբերող լրացուցիչ նյութերի ու վերլուծությունների ծանոթանալու կարիք: Ըստ այդմ, ուսումնասիրվել են հետավար ուսուցման ընդհանուր միտումները, խնդիրները, զարգացումները դիտարկող փաստաթղթեր, առանձին երկրների կրթական համակարգի կարգավորումներին վերաբերող հետազոտություններ: Այսպիսի փաստաթղթերի թիվը մեծ է: Գրեթե բոլոր միջազգային կառույցներն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային կառավարությունները անդրադարձել են համավարակին՝ վերջինիս ազդեցություններով պայմանավորված (ՄԱԿ և վերջինիս առանձին ստորաբաժանումներ, Համաշխարհային Բանկ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Եվրոպական Միության կառույցներ): Տարբեր հետազոտություններ անդրադառնում են հայկական կրթական համակարգի խնդիրներին: Որոշներում, չնայած կրթական համակարգին անդրադարձերի բացակայությանը, դիտարկվում են սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որոնք, ինչպես ցույց ենք տալիս վերլուծությունում, նույնպես ազդեցություն ունեն կրթության խնդիրների վրա:<sup>9</sup>

---

<sup>8</sup> Վանաձորի պետական համալսարանում իրականացվել են միայն փորձագիտական հարցումներ: Բուհի ղեկավարությունը, համավարակի տարածմամբ պայմանավորված, նպատակահարմար չգտավ ուսանողների շրջանում ֆոկուս-խմբային հարցումներ կազմակերպելը: Ըստ այդմ, ՎՊՀ-ից ներկայացվում են կրթական քաղաքականության փաստաթղթերը ([www.vsu.am](http://www.vsu.am)) և փորձագիտական հարցումների տվյալները:

<sup>9</sup>Տես Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն//Համաշխարհային Բանկ, CRRC, Եր, հուլիս, 2020; Covid-19 and higher education: today and tomorrow (impact analysis, policy responses and recommenadations)//UNESCO, IESALC, May, 2020; Farnell, T., Skledar Matijević, A., Šćukanec Schmidt, N., The impact of COVID-19 on higher education: a review of emerging evidence, NESET report, Luxembourg: Publications Office of the European Union. 2021, doi: 10.2766/069216; One year into COVID: Prioritizing education recovery to avoid a generational catastrophe Report of UNESCO online conference 29 March 2021; SOCIO-ECONOMIC IMPACT ASSESSMENT OF THE COVID-19 OUTBREAK IN ARMENIAN COMMUNITIES//UNDP, Armenia, 2020; The impact of Covid-19 on

Հաջորդ մակարդակում դիտարկվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Որակի ապահովման ազգային կենտրոնի կարգավորումները (որոշումներ, հրահանգներ, ուղեցույցներ, մեթոդական աջակցության փաստաթղթեր), որ ընդունվել են այս շրջանում ու վերաբերում են կրթության տարբեր առումներին:<sup>10</sup>

Համավարակի ու պատերազմի պատճառով կրթական միջավայրը շատ արագ փոխվեց՝ տեղափոխվելով օնլայն հարթակներ, ակտիվացան արդեն մշակված հարթակներն ու կիրառվեցին նորերը, որոնցից շատերն անձանոթ էին դասախոսների ու ուսանողների համար: Հետազոտության ընթացքում դիտարկվել է, թե ինչպես է կազմակերպվել ուսուցումը տարբեր կրթական հարթակներում:

Առանձին դիտարկվել են բուհական փաստաթղթերը, կարգավորումները, որոնք ներկայացված են բուհերի կայքերում: ԵՊՀ կայքում, օրինակ, տեղադրված են հարցազրույցներ դեկանների/տեղակալների, դասախոսների ու ուսանողների հետ, որոնցում ներկայացվում են հեռավար կրթության առավելություններն ու թերությունները:

Հաջորդ բաղադրիչը դաշտային հետազոտությունն է, որ իրականացվել է ԵՊՀ-ում և ՎՊՀ-ում:

Իրականացվել են փորձագիտական ու ֆոկուս-խմբային հարցումներ:

Փորձագիտական հարցումներ (շուրջ 10) իրականացվել են կրթության պատասխանատուների, կառուցվածքային ստորաբաժանումների, դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Փորձագիտական հարցումներին մասնակցել են դեկանների տեղակալներ, ովքեր պատասխանատու են եղել հեռավար ուսուցման կազմակերպման համար, ամբիոնների լաբորանտներ, ովքեր, չնայած ուղղակի պատասխանատվություն չունենալուն, ակտիվ ներգրավված են եղել գործընթացում, կրթության այլ պատասխանատուներ, ինչպես նաև դասախոսներ:

Ֆոկուս-խմբային հարցազրույցներն անցկացվել են ԵՊՀ ուսանողների շրջանում: Յուրաքանչյուր հարցմանը մասնակցել է 8-10 ուսանող, խմբերը ձևավորվել են խառը սկզբունքով (տղա-աղջիկ, տարբեր կուրսերի ուսանողներ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերից): Որոշ հարցերի լրացուցիչ ճշգրտման նպատակով անցկացվել են անհատական խորացված հարցազրույցներ ուսանողների հետ, որոնց

---

European higher education (Michael Gaebel, Henriette Stoeber)//SURVEY OF NATIONAL RECTORS' CONFERENCES – AUTUMN/WINTER SEMESTER 2021/22, The European University Association, November, 2021; THE STATE OF THE GLOBAL EDUCATION CRISIS: A PATH TO RECOVERY, A JOINT UNESCO, UNICEF, AND WORLD BANK REPORT, 2021: Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը տես «Աղբյուրներ և գրականություն» բաժնում:

<sup>10</sup> Փաստաթղթերը վերցվել են հիմնականում ԿԳՄՍՆ պաշտոնական կայքից: Տես՝ [www.escs.am](http://www.escs.am):

թվում եղել են Ուսանողական խորհուրդների ու Ուսանողական գիտական ընկերությունների ներկայացուցիչները:

Այս երկու մեթոդի զուգակցումը, չնայած որոշակի սահմանափակումներին, ընձեռել է հետազոտության նպատակին հասնելու ու առաջադրված խնդիրները լուծելու հնարավորություն:

#### 4. Արդյունքների վերլուծություն

Հետազոտությունը հնարավորություն տվեց բարձրագույն կրթության որակի և մատչելիության հետ կապված խնդիրներն ու զարգացումները դիտարկել մի քանի մակարդակում:

##### **Ա. Միջազգային կարգավորումներ, կրթական քաղաքականություններ:**

Համավարակը համաշխարհային ընդգրկում ունեցող իրողություն է, որի ազդեցությունները դիտարկվում են հարյուրավոր երկրներում, կրթության բոլոր մակարդակներում՝ նախակրթական հաստատություններ, հանրակրթություն, բարձրագույն ու ետբուհական կրթություն:

Համավարակին հակազդելու, հետևանքները նվազեցնելու պրակտիկաները բազմաթիվ են, իրենց հիմքում ունեն նաև ընդհանրություններ և՛ առանձնահատկություններ: Հայաստանյան կրթության զարգացման տեսանկյունից կարևոր է ոչ միայն այդ պրակտիկաները դիտարկելը, այլ նաև առավել արդյունավետները կիրառելու մեխանիզմներ մշակելը:

**Բ. Բուհական կառավարում, բուհերի, ֆակուլտետների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակում կայացված որոշումներ, բուն կրթական գործընթաց, ուսանողներ, դասախոսներ:**

##### **Գ. Կրթության որակի և մատչելիության հետ կապված հարցեր:**

##### **Ա. Միջազգային կարգավորումներ, կրթական քաղաքականություններ:**

Covid-19 համավարակի ազդեցությունն ահռելի է համաշխարհային կրթական տարածության, վերջինիս առանձին համակարգերի ու ենթահամակարգերի վրա:<sup>11</sup>

---

<sup>11</sup> Ըստ տարածաշրջանների, ինչպես նաև կրթության առանձին քաղաքիչների ազդեցությունների մասին մանրամասն տես՝ Covid-19 and higher education: today and tomorrow (impact analysis, policy responses and recommendations)//UNESCO, IESALC, May, 2020, էջ 9-14:

Կրթության ասպարեզում անբարենպաստ զարգացումներ արձանագրվեցին 2019թ.-ից, իսկ 2020թ. մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) Covid-19-ը հայտարարեց համավարակ:

2020թ. ապրիլի 1-ի դրությամբ շուրջ 3.4 մլրդ մարդ ավելի քան 80 երկրում, կամ աշխարհի բնակչության 43%-ը գտնվում էր կարանտինում: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ 2020 թվականի ապրիլի 1-ին փակվել էին դպրոցներ ու բուհեր 185 երկրում՝ ազդեցություն ունենալով 1.542.412.000 սովորողների վրա, որոնք կազմում են ընդհանուր գրանցվածների 89.4%-ը: Այդ թվից միայն ուսանողները, որ աշխարհի տարբեր երկրներում այս կամ այն կերպ բախվել էին COVID-19 ազդեցությամբ պայմանավորված խնդիրների, մոտավորապես 220 միլիոն էին:<sup>12</sup>

2020-2021թթ. ընթացքում, համաճարակային իրավիճակով, վարակակիրների թվով, պետական քաղաքականության սկզբունքներով պայմանավորված, հանրակրթության ու բարձրագույն կրթության ասպարեզում հեռավար ու առկա ուսուցումը կամ հիբրիդային եղանակները հաջորդում էին միմյանց: Կարանտինային և սոցիալական մեկուսացվածության միջոցառումները, որ իրականացվում էին երկրների մեծ մասում, բուհերին ստիպեցին գնալ արտակարգ, շատ դեպքերում՝ իրավիճակային լուծումների:

Փորձագիտական գնահատումների համաձայն բարձրագույն կրթության համակարգում նախկինում երբեք նման ծավալի խնդիրներ ի հայտ չէին եկել, չնայած ժամանակ առ ժամանակ լոկալ համաճարակներով պայմանավորված, առանձին տարածաշրջաններում կամ պետություններում բուհերը ստիպված գնացել են սահմանափակումների:<sup>13</sup> Հազարավոր բուհեր կարանտինի ու սոցիալական սահմանափակումների պատճառով փակեցին կամպուսները, սակայն դա չէր նշանակում աշխատանքի դադարեցում: Բախվելով նախկինում գոյություն չունեցած և ծավալներով աննախադեպ խնդիրների, բուհերը ձեռնամուխ եղան դրանց լուծմանն ու ուսուցման նոր եղանակների որոնումներին, այլ գործողություններին:<sup>14</sup>

Լրջագույն խնդիրների բախվեցին գրեթե բոլոր բուհերը՝ խոշորներից մինչև քիչ

<sup>12</sup>The COVID-19 Crisis Response: Supporting tertiary education for continuity, adaptation, and innovation, World Bank. Retrieved on 20 August 2020: [The-COVID-19-Crisis-Response-Supporting-Tertiary-Education-for-Continuity-Adaptation-and-Innovation.pdf \(worldbank.org\)](https://www.worldbank.org/en/topic/education/brief/the-covid-19-crisis-response-supporting-tertiary-education-for-continuity-adaptation-and-innovation):

<sup>13</sup> Covid-19 and higher education: today and tomorrow..., էջ 12:

<sup>14</sup> Дж. Маринони, Х. ван'т Ланд, Влияние COVID-19 на мировое высшее образование//МВО, Специальный выпуск 102, В Мире, էջ 8-9: Եվրոպական կրթական տարածությունում ազդեցությունների ու իրականացված միջոցառումների մասին մանրամասն տես նաև Farnell, T., Skledar Matijević, A., Šćukanec Schmidt, N., The impact of COVID-19 on higher education: a review of emerging evidence, NESET report, Luxembourg: Publications Office of the European Union. 2021, doi: 10.2766/069216:

թվով ուսանողներ ունեցող, հարյուրավոր բուհեր հայտարարեցին լուրջ ֆինանսական կորուստների<sup>15</sup>, ուսանողների թվի նվազման, պրոֆեսորադասախոսական կազմի ու սպասարկող անձնակազմի կրճատման անհրաժեշտության մասին: Խոցելի էին հատկապես ժամանակավոր պայմանագրերով աշխատող դասախոսներն ու այլ աշխատակիցները: Առաջին հայացքից ֆինանսական կայուն հոսքեր ունեցող եվրոպական ու ամերիկյան բուհերը նույնպես հայտարարեցին խնդիրների մասին: Ամերիկյան որոշ բուհեր, օրինակ, ուսանողներին որակյալ ու արագ կապով ապահովելու համար ստիպված էին ընդլայնել ինտերնետի հասանելիությունը համալսարանների տարածքում, հասանելիությունը հասցնել մինչև ավտոկայանատեղիներ, որովհետև շատ ուսանողների բնակարաններում արագ ու որակյալ կապը թանկ էր և ուսանողները դասերին միանում էին կայանատեղիներից: Եվս մեկ խնդիր էր ուսուցման ֆորմատի փոփոխության պայմաններում վարձերի վերանայման պահանջը: Մթենֆորդի համալսարանն, օրինակ, հայտարարեց, որ չի նվազեցնելու ուսման վարձը, սակայն կվերանայի սննդի և հանրակացարանների վճարները, դրանք հաշվարկելով ըստ այն օրերի, որ ուսանողներն անցկացրել են կամպուսում: Ամերիկյան համալսարաններից որոշները վերանայեցին նաև գնահատման քաղաքականությունը. շատ քննական առարկաներ դարձվեցին ստուգարքային, մեղմացվեցին պահանջները, ուսանողներին տրվեց օնլայն դասընթացներից օգտվելու բաց մատչելիություն:

Նույնիսկ այսպիսի միջոցառումները հնարավորություն չտվեցին հեռավար ուսուցման պայմաններում ապահովել կրթության բավարար արդյունավետությունը: Այս մասին վկայում են նաև հետազոտությունների տվյալները: Դրանցից մեկի համաձայն, հեռավար ուսուցման ազդեցությունները բարձրագույն կրթության համակարգի վրա, ըստ տոկոսների, այսպիսին են՝

*Կրթական գործընթացի դադարեցում՝ 24%,*

*Դիմորդների թվի նվազում՝ 46%,*

*Գիտական հետազոտությունները չեն կարող ավարտվել նախանշված ժամկետներում՝ 52%,*

*Համազործակցության թուլացում՝ 59%,*

*Ակադեմիական շարժունության նվազում՝ 89%:<sup>16</sup>*

<sup>15</sup> The impact of the Covid-19 Pandemic on education financing, May, 2020, The World Bank Group, էջ 1-12:

<sup>16</sup> Մանրամասն տես՝ Влияние пандемии COVID-19 на сектор высшего образования и магистратуры: международный, национальный и институциональный ответ, М., 2020, էջ 7: Այլ հետազոտություններում ազդեցությունները ըստ հաջորդականության կարող են տարբերվել, սակայն միտումները նույնն են: Տես օրինակ՝ The impact of Covid-19 on European higher education (Michael Gaebel, Henriette Stoeber)//SURVEY

Այս միտումներից ոչ բոլորն են տարածելի Հայաստանի կրթական համակարգի վրա: Համագործակցության թուլացման, ակադեմիական շարժունության նվազման, գիտական հետազոտությունների խնդիրները փորձագիտական հարցումների ու քանակական հետազոտությունների արդյունքներով որպես առաջնային չեն առանձնացվել: Փոխարենը որպես բարդություն դիտարկվել է կենտրոնանալ չկարողանալը՝ պատասխանների 39% 2021թ. համար, ձևական ներկայությունը՝ դասապրոցեսին չներգրավվելով՝ 25%, յուրաքանչյուր աշակերտին կամ ուսանողին ավելի քիչ ժամանակի հատկացումը՝ 22% և այսպես շարունակ:<sup>17</sup>

Կրթական համակարգը, տարբեր երկրներում առկա առանձնահատկություններով հանդերձ, ըստ փորձագետների համավարակի պայմաններում բախվեց մի քանի կարևոր, առաջնային խնդրի:

**Առաջին խնդիրը համավարակի պատճառով միջազգայնացման, ուսանողության շարժունության սահմանափակումն էր ու ազդեցությունների հաղթահարումը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարով:** Այս ազդեցությունը լուրջ էր հատկապես մեծ թվով արտասահմանցի ուսանողներ ունեցող բուհերի վրա: Սահմանափակումները բերեցին նրան, որ ուսումը դադարեցրած հազարավոր ուսանողներ վերադարձան հայրենիք, սակայն շատերը նման հնարավորություն չունեցան: Սակայն երկու դեպքում էլ խնդիրները ոչ թե լուծվեցին, այլ սկիզբ դրեցին նոր խնդիրների: Աշխարհի ամենաբարձր վարկանիշն ունեցող բուհերից մեկը՝ Քեմբրիջը, լուրջ քննադատության արժանացավ համավարակի հանդեպ ոչ հետևողական վերաբերմունքի պատճառով, երբ ստիպեց աշխատակիցներին և արտասահմանցի ուսանողներին երկու օրվա ընթացքում տուն վերադառնալ այն բանից հետո, երբ հայտարարեց անորոշ ժամկետով բուհը փակելու մասին: Քննադատության հիմնական պատճառն այն էր, որ այս մոտեցման պատճառով իրավիճակը կարող էր ավելի սրվել, քանի որ վերադարձող ուսանողներից շատերի երկրներում առողջապահական համակարգն ավելի թույլ էր զարգացած: Հընթացս ի հայտ եկան խնդիրներ քննությունները կազմակերպելու, գնահատման հետ կապված և ուսանողները բաց նամակով դիմեցին համալսարանի ղեկավարությանը, խնդրելով կամ փոխել գնահատման համակարգը կամ քննությունների ժամկետները:

Փորձագետներն ու կրթության պատասխանատուները<sup>18</sup> առաջիկա տարիների համար շարժունության հետ կապված բազմաթիվ խնդիրներ են տեսնում:

Ակադեմիական շարժունության տեսանկյունից ընդունող համարվող բազմաթիվ երկրներ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա) ֆինանսների սահմանափակության պատճառով ստիպված կլինեն կրճատել միջազգային ուսանողների թիվը: Սա իր հերթին կրթական քաղաքականության ճիշտ կազմակերպման դեպքում կարող է դառնալ առավելություն առանձին երկրների ու բուհերի համար: Ակադեմիական շարժունության «աշխարհագրության» փոփոխության պայմաններում առավելություն կստանան այն համակարգերը, որոնք կառաջարկեն որակի ու գնի տեսանկյունից մրցունակ կրթական ծառայությունների փաթեթ՝ կեցության, սննդի ու այլ առաջարկների ներառմամբ: Այս տեսանկյունից խնդիրը դիտարկելու դեպքում ՀՀ բարձրագույն կրթության համակարգը նույնպես կարող է ստեղծել նման ինստիտուցիոնալ հնարավորություններ:

Հայաստանը, չնայած այս ուղղությամբ հետազոտությունների բացակայությանը, արտասահմանցի ուսանողների հետ կապված անլուծելի խնդիրներ չունեցավ: Ըստ պաշտոնական վիճակագրության այդ թիվը նույնիսկ աճեց: Այսպես, 2019-2020 ուստարում. օտարերկրյա ուսանողների թիվը ՀՀ-ում կազմել է 4923, իսկ 2020-2021 ուստարում՝ 5896, այսինքն, մեկ ուսումնական տարում ավելացել է մոտ 1000-ով: ԱՊՀ երկրներից և Վրաստանից ուսանողների մեծ մասը հայեր են, որոնցից շատերը խնդիրներ չունեն Հայաստանում ապրելու հետ կապված (ազգականներ, սեփական բնակարաններ, այլ տարբերակներ): Այս ժամանակում աճել է նաև Հնդկաստանից և Իրանից ուսանողների թիվը: 2020-2021 ուս. տարում հիմնականում բժշկական պրոֆիլի բուհերում սովորել է Հնդկաստանից 2123 ուսանող՝ 2019-20 ուստարվա 1568-ի և Իրանից 323 ուսանող՝ 2019-2020 ուս. տարվա 256 ուսանողի դիմաց:<sup>19</sup> Համավարակի ազդեցությունների դիտարկման հնարավորություն տալիս է մամուլը. *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հնդիկ ուսանողներից 300 հոգի համավարակի տարածումից հետո չեն վերադարձել Հնդկաստան, նախընտրել են մնալ Հայաստանում: Նրանք գերադասել են մնալ*

---

<sup>18</sup> Վերլուծությունների հիմնական մասի հիքում ընկած է այն մոտեցումը, համաձայն որի, դասապրոցեսի վերականգնումը դեռ ամենևին չի նշանակում համավարակի հետևանքների ամբողջական հաղթահարում: Դրանք դրսևորվելու են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետանկարում, ազդելով կրթական ռազմավարությունների վրա: Այս մասին մանրամասն տես, օրինակ Farnell, T., Skledar Matijević, A., Šćukanec Schmidt, N., The impact of COVID-19 on higher education: a review of emerging evidence, էջ 27-31; 40-43; 51-53:

<sup>19</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021, էջ 170//[99526838.pdf \(armstat.am\)](https://armstat.am/):



*այստեղ, քանի որ վարակվածների թվով Հնդկաստանն ավելի բարձր ցուցանիշ ունի: Նրանց համար Հայաստանն ավելի անվտանգ է»:<sup>20</sup>*

Երկրորդ խնդիրը, որ ավելի բարդ է և վերաբերում է նաև Հայաստանին, կապված էր **ուսանողների և դասախոսների՝ նույն տարածքում միաժամանակ ֆիզիկապես գտնվելու հնարավորության հետ**: Աշխարհի երկրների մեծ մասում, չնայած ուսուցման տարբեր մեթոդների գուգակցմանը, հենց այս մոտեցումն է գերակշռում: Համավարակի պայմաններում առցանց ուսուցումը դարձավ հիմնական այլընտրանքը և բուհերը պարտադրված էին կարճ ժամկետում, նույնիսկ օրերի ընթացքում ամբողջական կրթական ծրագրեր փոխել առցանց ռեժիմի, իսկ շատերն այդ ռեժիմում անցկացրեցին կիսամյակներ: Առցանց ուսուցման անցնելու հարցում առաջամարտիկները չինական բուհերն էին, որոնց հաջորդեցին նաև այլ երկրները:

Հընթացս, սակայն ի հայտ եկան առցանց ուսուցման հետ կապված շատ լուրջ խնդիրներ, որ վերաբերում էին առաջին հերթին տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների մատչելիության ոլորտում առկա անհավասարությանը: Որոշ երկրներում, օրինակ Բրազիլիայում, ինտերնետի մատչելիությունն այնքան սահմանափակ էր, որ որոշ բուհեր ուղղակի դադարեցրին ուսուցումը: Այս որոշումը պայմանավորված էր նրանով, որ կրթությունն առցանց կազմակերպելու դեպքում գործընթացին կկարողանային մասնակցել միայն սահմանափակ թվով հարուստ ուսանողներ, իսկ մեծամասնություն կազմող աղքատ ուսանողները պարզապես կզրկվեին կրթություն ստանալու հնարավորությունից և այսպիսով ավելի կխորանար անարդարությունն ու հնարավորությունների անհավասարությունը:

Առցանց ուսուցումը ձևավորեց նաև հոգեբանական խնդիրներ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղացիների ուսանողների համար լուրջ սթրես է համարվել համակուրսեցիների և պրոֆեսորների հետ կենդանի շփման անհնարինությունը և այդ պատճառով նրանք կարևորել են կորոնավիրուսի և դրանով պայմանավորված՝ կրթական համակարգի փոփոխությունների մասին տեղեկատվություն ստանալը:<sup>21</sup>

**Հաջորդ խնդիրը, որ դիտարկելի է հայաստանյան կրթական համակարգում նույնպես, վերաբերում է հեռավար ուսուցման որակին՝** հընթացս կայացվող որոշումների, դասախոսների, որոշ դեպքերում՝ նաև ուսանողների ոչ բավարար

<sup>20</sup>//[ԵՊԲՀ հնդիկ ուսանողները Հայաստանում, համավարակի ընթացքում \(hetq.am\)](https://www.hetq.am)

<sup>21</sup> Влияние пандемии COVID-19 на сектор высшего образования и магистратуру, էջ 9:

պատրաստվածության պայմաններում:

Հեռավար ուսուցման հետ կապված քննարկումներն ու բանավեճերը համավարակի ևս մեկ «ազդեցությունն» են, չնայած իրականում խոսույթը ձևավորվել է ավելի վաղ, մինչև համավարակի ի հայտ գալը:<sup>22</sup> Համավարակով պայմանավորված նոր իրողությունները ավելի սրեցին բանավեճերը:

Շրջանավոր տարբերակներից մեկն այն է, որ հեռավար ուսուցումը կարող է ամբողջովին դուրս մղել օֆլայն տարբերակը: Հետազոտողները, սակայն, վաղ են համարում մեկ ֆորմատը մյուսով ամբողջությամբ փոխարինելու հավանականությունը, չնայած որ հեռավար ուսուցման առավելություններն ակնհայտ են: Հիմնական խնդիրն այն է, որ հեռավար ուսուցման ծրագրերի ամբողջական ներդրումն ու դրանց հենքով կրթության կազմակերպումը ավելի էժան չէ հիմնական կրթական առաջարկի համեմատությամբ: Օնլայն կրթական ծրագրերի ինքնարժեքն ավելի բարձր է ու լուրջ ծախսեր է պահանջում բուհերից տեխնոլոգիաների, սարքավորումների ու մենեջմենթի հետ կապված: Ընդ որում, այս կամ այն հեռավար ծրագրի հաջողությունը կախված է նաև բուհերի «բրենդից», ինչը ցույց են տալիս նաև Coursera կամ EdX հարթակներում առաջարկվող տարբեր մագիստրոսական ծրագրերի արդյունքները: Առաջատար համալսարաններն առաջարկում են միկրոմագիստրոսական ծրագրեր Edx <https://www.edx.org/micromasters> և Coursera <https://www.coursera.org/mastertrack> հարթակներում: Դատելով արձագանքներից ու լուծումներից, առաջիկա տարիներին ականատեսն ենք լինելու կրթական առաջարկների բազմազանության, նոր գործիքների ի հայտ գալու:

Հայաստանյան կրթական համակարգը ևս զերծ չի մնալու այս ամենից, սակայն շատ բան կախած է գործողություններից: Հետազոտությունը ցույց տվեց, որ դրանք դեռևս բավարար չեն հայաստանյան բարձրագույն կրթական համակարգում արմատական փոփոխությունների հասնելու համար:

---

<sup>22</sup>Մոտ 20 տարի առաջ կար տեսակետ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը կրթության ոլորտ կախարդական փայտիկի դեր է խաղալու: Տեխնոֆիլների կարծիքով՝ ամեն ինչ կդառնա հասանելի, մատչելի, և մարդիկ ավելի շատ կսովորեն: Այդ տարիներին հաջորդաբար ստեղծվեցին հեռավար կրթության բազմաթիվ հարթակներ, որոնցից հատկապես հայտնի են Քան ակադեմիան, MOOCs-ը: Որոշ ժամանակ անց ի հայտ եկան տեխնոսկեպտիկ կարծիքներ: Հայտնվեցին հետազոտություններ, որ հեռավար դասընթացների մասնակիցների մինչև 80%-ը կիսատ են թողնում դասընթացները: Մեկ այլ ուսումնասիրությամբ էլ պարզվեց, որ այն երկրները, որոնք մեծ ներդրումներ են կատարել դպրոցները տեխնոլոգիաներով հագեցնելու ուղղությամբ, էական առաջընթաց չունեն կրթության որակի դաշտում://Մանրամասն տես՝ Ս. Խաչատրյան, Երբ կրթության միակ ձևը դառնում է հեռավարը: [Երբ կրթության միակ ձև է դառնում հեռավարը \(168.am\)](#)

**Բ. Հայաստանյան կրթության կառավարում, բուհերի, առանձին ֆակուլտետների մակարդակում կայացված, կայացվող որոշումներ: Բուն կրթական գործընթաց:**

ՀՀ կրթական համակարգը, այդ թվում բուհերը նույնպես պատրաստ չէին համավարակի մարտահրավերներին, ինչի մասին վկայում են և հանրային արձագանքները և դասախոսներն ու ուսանողները: Հետազոտությամբ հնարավոր դարձավ պարզել, որ բուհերի մեծ մասում հեռավար ուսուցման առաջին շաբաթների ընթացքում եղել են հիմնականում իրավիճակային, արձանագրային լուծումներ, որպես կանոն չեն դիտարկվել կրթության որակի ու մատչելիության բաղադրիչները, առաջնային է համարվել դասապրոցեսի կազմակերպումը:

Հետազոտությամբ խնդիրներ բացահայտվեցին գործընթացի բոլոր բաղադրիչներում:

**Ինստիտուցիոնալ որոշումները** կայացվել են հիմնականում Կրթության և գիտության (միավորումից հետո՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի) նախարարության կողմից: Հարցումները, նյութերի ու նախարարության կայքի ([www.escs.am](http://www.escs.am)) դիտարկումները ցույց են տալիս, որ բավարար ակտիվություն /նախաձեռնողականություն կառույցը հանդես չի բերել: Գործողությունները, որպես կանոն, սահմանափակվել են հիմնականում հեռավար կրթությանն անցման ընդհանուր բնույթի առաջարկներով, հիմնվելով համաճարակային իրավիճակի և Առողջապահության նախարարության մեթոդական ցուցումների վրա:<sup>23</sup> Հետագայում նույն վիճակը պահպանվել է, կայքում համենայնդեպս տեղեկություններ հեռավար ուսուցման շուրջ քննարկումների ու այլ նախաձեռնությունների մասին գտնել չկարողացանք:

Մեթոդական ուղղորդման հարցու ակտիվ է եղել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, որը 2020թ. հրապարակել է «Ուղեցույց բուհերին՝ առցանց ուսուցումը որակի ապահովման չափանիշներին կազմակերպելու համար»,<sup>24</sup> որի ներածական հատվածում ներկայացվում են հեռավար ուսուցման կազմակերպման հիմնական բարդությունները. «...*Ամբողջությամբ առցանց ուսուցումը և գնահատումը փորձություն են ինչպես դասախոսների, այնպես էլ բուհերի*

<sup>23</sup> 2020թ. կառավարությունը նախաձեռնել է նաև դասընթացներ «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով: Մանրամասն տես՝ [հեռավար ուսուցում - ՀՀ ԿԳՄՄՆ \(escs.am\)](http://www.escs.am)

<sup>24</sup> Ուղեցույց բուհերին՝ առցանց ուսուցումը որակի ապահովման չափանիշներին համապատասխան կազմակերպելու համար, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, Եր., 2020, էջ 2:

համար, որոնց կանոնակարգերն ու քաղաքականությունները որպես կանոն առցանց ուսուցման վերաբերյալ համապատասխան դրույթներ չունեն»:<sup>25</sup> Այս ձևակերպումը վիճակի արձանագրումն է, որում գտնվում էր բարձրագույն կրթության համակարգը մինչև համավարակի տարածումը: 2020թ. նույն կառույցը հրատարակել է ևս մեկ ուղեցույց՝ «Ուղենիշներ համավարակի պայմաններում լաբորատոր և կլինիկական միջավայրում ուսուցման գործնական գնահատման համար», որում մանրամասն ներկայացվում են հիմնականում բժշկական ուղղվածության հաստատություններում լաբորատոր աշխատանքների, պրակտիկաների կազմակերպման լուծումներն ու այլընտրանքները:

Գրեթե բոլոր բուհերում դասընթացներն առցանց կազմակերպելու սկզբնական փուլում այն իրավիճակն էր, որ ներկայացվել է ՈԱԱԿ փաստաթղթում: Թեպետ առանձին մասնագիտությունների ու դասընթացների գծով կիրառվում էր կամ ամբողջական կամ մասնակի առանց ուսուցում, սակայն դրանց ազդեցությունը մեծ չէր:<sup>26</sup>

Բուհերի արձագանքը համավարակին նույնպես նույնական էր: ԵՊՀ-ում առցանց ուսուցման անցնելու գործընթացը կարգավորվել է ռեկտորի հրամաններով, որոնցում նշվում էին հեռավար ուսուցման անցնելու հիմքերը և անհրաժեշտ գործողությունները: Դասընթացների և քննությունների կազմակերպման հիմնական պահանջներից մեկը դրանք [www.e-learning.yzu.am](http://www.e-learning.yzu.am) հարթակում կազմակերպելն էր: Առցանց ուսուցման առաջին փուլում կազմակերպվեցին արագացված դասընթացներ ԵՊՀ դասախոսների համար, որոնցում ներկայացվեցին [www.e-learning.yzu.am](http://www.e-learning.yzu.am) հարթակն ու դրանցից օգտվելու մեխանիզմները: [www.yzu.am](http://www.yzu.am) կայքում հնարավոր է գտնել հեռավար ուսուցման վերաբերյալ այլ փաստաթղթեր, պարբերաբար հրատարակվել է նաև դեկանների կամ այլ պատասխանատուների կարծիքները

---

<sup>25</sup> Ուղեցույց... էջ 2:

<sup>26</sup> ԵՊՀ-ն, օր., նախատեսում էր առցանց ուսուցում առանձին դասընթացների գծով: Բոլոր ֆակուլտետների «ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ՝ նախատեսված ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ սովորող ուսանողների համար», ունի համապատասխան կետ՝ «Առցանց դասընթացի կազմակերպումը» վերնագրով: 7.1. ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով: 7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը: 7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին երաշխավորություն ստանալու համար: Կան նաև այլ կետեր, որ չենք ներկայացնում: Տես օրինակ՝ [ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԿԱՐԳՆ \(ysu.am\)](http://www.yzu.am); [Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ \(ysu.am\)](http://www.yzu.am);

հեռավար ուսուցման ընթացքի, խնդիրների, առավելությունների մասին:

Դասախոսներին ու ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվություն է փոխանցվել նաև վերջիններիս էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի, այնպես էլ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից (դեկանատներ, ամբիոններ): Տեղեկատվություն ստանալու և e-learning հարթակում դասապրոցեսը կազմակերպելու համար համալսարանական դասախոսները կամ ակտիվ սկսել են գործածել իրենց համալսարանական հասցեները կամ ստացել են այդպիսիք, եթե մինչ այդ չեն ունեցել: 2020թ. կայքում եղել է նաև մանրամասն տեղեկատվություն ZOOM հարթակից օգտվելու և դասախոսություններ կազմակերպելու համար:<sup>27</sup>

Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարանի մոտեցումը ընդհանուր գծերով նույնը լինելով, ունի որոշ տարբերություններ: Համալսարանի կայքի ([www.vsu.am](http://www.vsu.am)) ուսումնասիրությամբ հնարավոր եղավ գտնել հետևյալը. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնակատարի 02.04.2019 թ. թիվ 204 Լ/Կ հրամանով հաստատվել է «Հեռավար ուսուցման համակարգի ներդրման քաղաքականությունը»: Փաստաթուղթը ներկայացնում է հեռավար ուսուցման նպատակը, խնդիրները, շահառուներին և պատասխանատուներին: ԲՈՒՀ-ի կայքում կա ևս երկու փաստաթուղթ-ուղեցույց դասախոսների և ուսանողների համար. «Moodle» *հեռավար ուսուցման համակարգ. ուսանողի մեթոդական ուղեցույց* (58 էջ) և «Moodle» *հեռավար ուսուցման համակարգ. դասախոսի մեթոդական ուղեցույց* (208 էջ):

Ցավոք, հնարավոր չէ պարզել, թե քանի ուսանող կամ դասախոս է ծանոթացել ուղեցույցին, ինչ խնդիրներ են ի հայտ եկել, ինչպես են դրանք լուծվել, հետադարձ կապի ինչ մեխանիզմներ են կիրառվել: Ուստի բավարարվում ենք փաստաթղթերի գոյությունն արձանագրելով:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, դատելով կայքի նյութերից, նույնպես կարողացել է ապահովել արագ անցումը հեռավար ուսուցմանը. «...Մանկավարժական համալսարանն անցնում է առցանց ուսուցման, գործընթացը շարունակվում է առցանց ASPU Classroom հարթակում՝ ըստ դասացուցակի: Առցանց կիրականացվեն նաև միջանկյալների մեծ մասը՝ բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերում»:<sup>28</sup>

<sup>27</sup> [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՊՀ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄՆԵՐԴՐՎԵԼ ԷՆՈՐ ԳՈՐԾԻՔ \(ysu.am\)](http://www.vsu.am)

<sup>28</sup> [ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացը շարունակվում է առցանց ASPU Classroom հարթակում:](http://www.vsu.am)

Բուհերում հեռավար ուսուցմանը անցնելու գործընթացը, փաստորեն, եղել է արագ, համակարգի համար անսպասելի, ընդունված որոշումները նպատակ են ունեցել ապահովել արագ անցումն ու առաջին հերթին դասընթացների կազմակերպումը՝ հնարավորինս մեծ թվով ուսանողների ներգրավմամբ:

Խնդիրներ առկա են նաև հաջորդ մակարդակներում:

**Ֆակուլտետների մակարդակում**, հատկապես առաջին անգամ հեռավար ուսուցման անցնելու փուլում, ձևակերպվել ու լուծվել են հիմնականում իրավիճակային խնդիրներ.

*Ա. դասախոսներին ծանոթացնել հեռավար ուսուցման հարթակներին,*

*Բ. ուսանողներին ծանոթացնել հեռավար ուսուցման հարթակներին,*

*Գ. դեկանատների աշխատակիցների, ամբիոնների լաբորանտների, դեկանների տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանումների այլ աշխատակիցների օգնությամբ կազմակերպել դասապրոցեր:*

Հետազոտությունը ցույց տվեց, որ այս մակարդակում նույնպես *անցման անսպասելիությամբ* պայմանավորված կայացվել են հիմնականում իրավիճակային որոշումներ:<sup>29</sup> Ամենակարևոր խնդիրը եղել է հեռավար ուսուցումը կազմակերպելն ու դասախոսների և ուսանողների համար համապատասխան հնարավորություններ ստեղծելը:<sup>30</sup>

ԵՊՀ-ում, օրինակ, հեռավարի անցման առաջին փուլում խնդիրներ են առաջացել [www.e-learning.yzu.am](http://www.e-learning.yzu.am) հարթակի հետ կապված: «...Մեզ ասվել է, որ ֆակուլտետներն ունենալու են պատասխանատուներ, զբաղվելու են հեռավարի հարցերով, բայց չի ասվել, թե ինչ ու ինչպես պետք է անել: Ասել են հետևեք, որ դասերը կայանան: Հիմնական խնդիրը դրված էր դասերի կայացումը, բայց թե ի՞նչ ճանապարհով, ի՞նչ գործիքներով: Քեզ կարող է ասելին, որ դու բոլորի մուղները մուտք ունես, կարող ես մտնել, վերահսկել: Ըստ էության ամբիոնների հետ կապված հարցերն էլ հիմնականում անձնական նախաձեռնությունների արդյունքում են կարգավորվել»:

<sup>29</sup> Խնդիրը միայն հայաստանյան չէ: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, հեռավար ուսուցման գործիքների կիրառմամբ կրթությունը կազմակերպելուն համավարակի պայմաններում բուհերի միայն 20%-ն էր պատրաստ:

<sup>30</sup> ... Հայաստանի շատ քիչ ուսուցիչներ ու դասախոսներ են օգտագործում հեռավար ուսուցումը, օնլայն հարթակները: Գլխավոր պատճառներից մեկն այն է, որ Հայաստանում մանկավարժները շատ ծանրաբեռնված են աշխատում և քիչ վճարվում: Մենք ունենք դասախոսներ, ովքեր մեկ կիսամյակում աշխատում են 200-300 ուսանողի հետ: Պատկերացրեք, ինչ է նշանակում՝ այդքան ուսանողների հետ դեմ առ դեմ ձևաչափից գատ՝ նաև հեռավար աշխատելը: Հենց այդ պատճառով Հայաստանում հեռավար ուսուցումը դիտարկվում է՝ որպես լրացուցիչ բեռ://Ս. Խաչատրյան, Երբ կրթության միակ ձևը դառնում է հեռավարը. [Երբ կրթության միակ ձև է դառնում հեռավարը \(168.am\)](http://www.e-learning.yzu.am):

*Փորձագիտական հարցում, ԵՊՀ:*

Հեռավար ուսուցման առաջին շաբաթների ընթացքում դասերը կազմակերպվել են տարբեր հարթակներում. Zoom, Skype, այլ հարթակները ակտիվորեն օգտագործվել են: Օգտագործվել են նաև Viber, WhatsApp հարթակների հնարավորությունները, հաճախ ուսանողների նախաձեռնությամբ: Այս ամենը տևել է այնքան, մինչև բուհերը առաջարկել, հետագայում նաև պարտադրել են իրենց սեփական հարթակները:

Տարբեր բուհերում ու ֆակուլտետներում խնդիրները հիմնականում նույնն են եղել:

Դրանք վերաբերել են առաջին հերթին դասախոսների ու ուսանողների տեխնիկական պատրաստվածության հարցերին: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չնայած բուհերում մինչև հեռավար ուսուցման անցնելը եղել են էլեկտրոնային հարթակներ, սակայն դրանք բավարար ակտիվությամբ չեն օգտագործվել: Հարցաշարերը, գրականությունն ու այլ նյութերը որպես կանոն փոխանցվել են լսարանում՝ տարբեր կրիչների միջոցով կամ թղթային տարբերակով:

Մեկ այլ խնդիր է նաև դասախոսների ու ուսանողների կողմից համալսարանական էլեկտրոնային հասցեները չիմանալը: Շատ ուսանողներ ու դասախոսներ նշել են, որ իրենք կամ չեն ունեցել էլեկտրոնային փոստ [www.yso.am](http://www.yso.am) տիրույթում կամ այն չեն օգտագործել: Ամբիոնների աշխատակիցները նշում էին, որ որոշ դասախոսների համար հեռավար ուսուցման անցնելուց հետո են էլեկտրոնային փոստային հասցեներ բացվել, իսկ մինչ այդ դասախոսությունները կազմակերպվել են արտաբուհական հարթակներում: Սա իր հերթին ազդել է տեղեկատվության փոխանցման վրա, շարունակվել են նախկինում կիրառված պրակտիկաները: Շատ կուրսերում, օրինակ ավագը կամ ևս 2-3 հոգի, որ ակտիվ օգտագործել են բուհական էլեկտրոնային փոստերը, դրանք ներբեռնել են ու տարածել համակուրսեցիների շրջանում արդեն Viber կամ Messenger համակարգերում ստեղծված իրենց խմբերում:

*«Ամենասկզբում որ հեռավարին անցանք, ուղղակի կար հրամանը, բայց ոչ մի մեխանիզմ չկար: Չի ասվել նաև, թե ով է ամբիոնից դրա համար պատասխանատու: Առաջին մեկ-երկու շաբաթը որ դասախոսին ոնց հարմար էր, դասը էդպես պարապում էր: Նույնիսկ հեռախոսով զանգում, դաս էին անում: Խատը վիճակը մի ամբողջ կիսամյակ տևեց՝ մարտից մինչև մայիս-հունիս: Մեպտեմբերից, ավելի ճիշտ երևի առաջին ընթացիկներից հետո նոր մի քիչ կարգավորվեց: Փաստացի էս ամիսներին մենակ դասերը վերահսկելն էր արվում»:* Փորձագիտական հարցում, ԵՊՀ:

Դասախոսներից որոշների համար խնդիր է եղել նաև համակարգչային գրագիտությունը, քանի որ բարդ է եղել [www.e-learning](http://www.e-learning) հարթակում առկա գործիքները

կիրառելը: Այս խնդրի լուծումներն էլ հիմնականում ոչ ինստիտուցիոնալ մակարդակում են տրվել: Շատ ամբիոններում հարցը կարգավորել են լաբորանտները, որվքեր դարձել են յուրօրինակ «փրկօղակ»՝ օգտագործել են դասախոսների հարթակները, դասեր նշանակել, նյութեր ներբեռնել, ապահովել գրագրությունը և այլն:

Աճել է նաև դեկանատների աշխատակիցների, դեկանների տեղակալների ծանրաբեռնվածությունը, քանի որ չունենալով ձևակերպված պարտականություններ, նրանք աջակցել են օգնության կարիք ունեցող դասախոսներին: Որոշ դասախոսների համար այս խնդիրները կարգավորել են նաև ընտանիքի անդամները:

Դասախոսներից շատերի համար խնդիր է եղել համակարգիչների առկայությունը, ինտերնետային կապը: Խնդիրները սրվել են հատկապես այն ժամանակ, երբ ընտանիքի այլ անդամներն էլ են հեռավար դասերի են մասնակցել: Քիչ ընտանիքներում 3-4 համակարգիչ կա և կա՛մ մեծահասակները կա՛մ դպրոցականները ստիպված են եղել դասերին միանալ հեռախոսներից:

Կապի որակի ու մատչելիության խնդիրները դասախոսների մոտ ի հայտ եկան նաև հիբրիդային ուսուցման ընթացքում, երբ օրինակ ԵՊՀ-ում որոշ կուրսեր, իրենց ընտրությամբ, դասերն անում էին առկա, իսկ որոշները՝ հեռավար: Շատ դասախոսներ խառը դասացուցակի պատճառով առկա դասից հետո հեռավարը ստիպված պարապում էին համալսարանի տարածքից: ԵՊՀ Աբովյան փողոցի մասնաշենքերում կապի որակի խնդիր առկա էր նաև հետազոտության ընթացքում: «Մի պահ կար, որ կուրսերը խառն էին, դա էլ դասախոսի համար էր խնդիր. եթե միաժամանակ 4-5 դասախոս կապին կպնում էր, արդեն կապը չէր հերիքում: 313 լսարանում դրան մոտի 4-6 նստարանին վայժայր բռնում է, բայց լուսամուտի մոտ ու ավելի հեռու արդեն կապ չկա: Ի՞նչ անես»: Փորձագիտական հարցում, ԵՊՀ:

Այս խնդիրները, նոր լինելով, իրականում ավելի լայն՝ համակարգային հիմնախնդիրների մաս են կազմում, որ չեն լուծվել բարեփոխումների ընթացքում:

Այսպիսով, եթե փորձենք արձանագրել համավարակով պայմանավորված հեռավար ուսուցման անցնելու առաջին փուլի խնդիրները պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար, կստանանք հետևյալ պատկերը.

*ա. դասախոսական անձնակազմի որոշ ներկայացուցիչների՝ հեռավար ուսուցում կազմակերպելու համար ոչ բավարար հմտությունները:*

*բ. տեխնիկական միջոցների, համացանցի մատչելիության խնդիրները:*

*գ. բովանդակային տեսանկյունից հեռավար ուսուցումը հիմնականում որպես առկայի «կրկնօրինակում» ընկալելը:*

*դ. ուղեցույցների, խորհրդատվական թերթիկների, այլ տեղեկատվական*



*նյութերի ոչ բավարար լինելը:*

Ուսանողական միջավայրի խնդիրները, ընդհանուր գծերով նման լինելով վերը բերվածներին, միաժամանակ ունեն տարբերություններ:

Հետազոտությունը ցույց տվեց, որ հեռավար ուսուցման գնահատականները ուսանողական միջավայրում տարբեր են, իսկ դրանց վրա ազդել են բազմաթիվ գործոններ. անսպասելիություն, կտրուկ անցում, հեռավար ուսուցման տևողություն, տարբեր բնակավայրերից լինել:

**ԲՈՒՀ-ի գտնվելու վայր.** հեռավար ուսուցման անցնելու փուլում շատ ուսանողներ ունեցել են վարձակալած բնակարաններ (դրանք վարձակալում են հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ եթե պայմանները ձեռնտու են, վճարում են նաև ամռան համար ու պահում բնակարանը) ու հեռավար ուսուցման անցնելուց հետո չեն իմացել պահել թե՛ հանձնել այդ բնակարանները: Ոչ դասախոսները, ոչ կրթության պատասխանատուները չեն իմացել, թե ինչքան կարող է շարունակվել հեռավար ուսուցումը: Բնակարանները հանձնած շատ ուսանողներ հետագայում լուրջ խնդրի առաջ են կանգնել, քանի որ 44-օրյա պատերազմից հետո Արցախից հազարավոր փախստականներ տեղափոխվեցին Երևան ու հարակից բնակավայրեր, ինչը բերեց բնակարանների վարձի աճի, նույնիսկ Աբովյանում այս ամիսներին բնակարանների վարձակալության գները հասել էին երևանյանին: Նույն խնդիրները, չնչին տարբերություններով, արձանագրվել են նաև Վանաձորում անցկացված փորձագիտական հարցումների ընթացքում:

**Եվս մեկ խնդիր է համակարգչի կամ հեռախոսի առկայությունը:**<sup>31</sup> Ուսանողներից շատերը համակարգիչ կամ հեռախոս չունենալը ներկայացնում են որպես նույն կարգի բարդություն այն դեպքում, երբ հեռավար կրթության պայմաններում դրանք տարբեր նշանակության գործիքներ են: Նույնացումն այս դեպքում ավելի շատ հեռավար կրթության մեխանիկական ընկալման ցուցիչ է, երբ պետք է ընդամենն ապահովել մասնակցությունը դասախոսության հարթակ մտնելով, մասնակիցների ցանկում երևալով, այնուհետև ձայնը խլացնելով ու պատկերը փակելով: Այն դեպքում, երբ համակարգիչը տալիս է կազմակերպված

---

<sup>31</sup> Հանրային կարծիքի ուսումնասիրության մասնակիցների 20%-ը, այսինքն յուրաքանչյուր հինգերորդը որպես հեռավար ուսուցման կազմակերպման հիմնական խոչընդոտ նշել է «համապատասխան տեխնիկայի կամ այլ գործիքների բացակայությունը»://Հանրային կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ, Եր., 2021, էջ 42:

«աշխատանքային» տարածք ունենալու, մեծ թվով նյութեր ներբեռնելու ու արխիվացնելու հնարավորություն:

Չնայած խնդիրների առկայությանը, տեխնիկական գրագիտության, համակարգչից կամ հեռախոսից օգտվելու տեսանկյունից ուսանողներն առավելություն ունեն դասախոսների նկատմամբ, քանի որ հեռախոսը վերջիններիս առօրյայի անբաժան մասն է: Կրթության փորձագետ Ս. Խաչատրյանը այս իրողության շուրջ դիտարկումները ներկայացնում է հետևյալ ձևակերպմամբ. *«Նախկինում ուսանողները ձգտում էին նստել լսարանի կենտրոնական շարքի առաջին տեղերում: Դա հնարավորություն էր տալիս ավելի լավ տեսնել գրատախտակը, ավելի լավ լսել դասախոսին: Ներկայումս ուսանողներն ավելի կենտրոնախույս են նստում լսարանում: ...Սրա պատճառը, թերևս, այն է, որ կենտրոնի առաջին շարքերում նստելն ուսանողին զրկում է հեռախոսից օգտվելու հնարավորությունից: ...Նախկինում ուսանողներին ուղղված հիմնական դիտողությունը «Մի խոսիր»-ն էր: Այսօր հիմնական դիտողությունը՝ «Հեռախոսը մի կողմ դիր»-ն է: Այսինքն՝ ուսանողներն այլևս հակված չեն իրար շատ մոտ նստելու, քանի որ դասից շեղվելու հիմնական միջոցը հեռախոսն է»:<sup>32</sup>*

Հեռախոսների ու համակարգիչների ավելի ակտիվ օգտագործումը թույլ տվեց որ ուսանողներն ավելի հեշտ անցնեն հեռավար կրթության: Դիտարկումը, սակայն, չի վերաբերում կրթության բովանդակությանը, այլ միայն մասնակցությանը կամ մասնակցության իմիտացիա ստեղծելուն:

Կրթության պատասխանատուները նույնպես արձանագրել են մասնակցության հետ կապված փոփոխություններ. *«Սկզբից մասնակցության նույն պատկերն էր առկայի ու հեռավարի: Պատմաբանները միշտ շատ էին գալիս, արվեստագետներներն ու կովկասագետները քիչ: Էդ սպեցիֆիկան մնաց: Օրինակ կովկասագետների չորրորդ կուրսն ակտիվ էին ու օնլայնի ժամանակ էլ էին ակտիվ: Իսկ ընդհանուր շատ տարբերություններ չկային»:* Փորձագիտական հարցում, ԵՊՀ:

Մասնակցության հետ կապված նույն դիտարկումները ներկայացվել են գրեթե բոլոր ֆակուլտետներում. *«Ներկայացնելով ուսանողների ատիվությունը՝ մեր գրուցակիցը (Աստվածաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա. Հովհաննիսյանը) նշեց, որ այստեղ աչքի ընկնող տարբերություններ առանձնապես չկան. «Այն ուսանողը, որը պարտաճանաչ է լսարանային պայմաններում,*

<sup>32</sup> Ս. Խաչատրյան, Դիտարկումներ ուսանողների վարքագծի վերաբերյալ// [Դիտարկումներ ուսանողների վարքագծի վերաբերյալ \(168.am\)](#)

պարտաճանաչ է նաև առցանց հարթակում».<sup>33</sup> Բնագիտամաթեմատիկական ուղղվածության ֆակուլտետներում նույնպես մասնակցության հետ կապված պատկերը էական փոփոխությունների չի ենթարկվել. «Մեր ֆակուլտետում առցանց ուսուցման վերաբերյալ առաջին հաշվետվությունը ներկայացրել ենք երեկ, ըստ որի՝ ուսանողության մասնակցությունը դասերին տարբեր է: Ցածր կուրսերի ուսանողներն ավելի ակտիվ են մասնակցում՝ 70-80 տոկոս, իսկ բարձր կուրսերը մի փոքր ավելի պասիվ են՝ մոտ 50-60 տոկոս: Բայց կարող եմ ասել, որ նրանց մասնակցության ցուցանիշը հիմա ավելի բարձր է, քան առկա ուսուցման ժամանակ», - նշեց Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկանը».<sup>34</sup>

**Չնայած հեռավարին հեշտ անցնելուն, ուսանողների մի մասը ունեցել է ինտերնետի մատչելիության, կապի որակի խնդիրներ:**<sup>35</sup> Մա վերաբերում է հատկապես այն ուսանողներին, ովքեր հեռավար ուսուցումը շարունակել են իրենց բնակավայրերից: «Ինտերնետի խնդիրն էր լուրջ, հատկապես շրջաններից ուսանողների համար: Շատերն ասում էին, որ մեր ինտերնետի փողը համալսարանը պետք է տա»: Փորձագիտական հարցում, ՎՊՀ:

Ինտերնետի խնդիրներ արձանագրվել են բոլոր մասնագիտությունների գծով. «ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ Նարինե Դիլբարյանի ներկայացմամբ, «այս ընթացքում մի շարք հարթակներ ենք փոխել, գնահատել արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսուցման «պերճանքն ու թշվառությունը»: ... Ակներև է մեր հանրապետության և նրա անբաժան մասի՝ ԵՊՀ-ի անպատրաստ լինելը համատարած անցմանը հեռավար կրթության, որովհետև ամենից առաջ հեռավարությունը պահանջում է հզոր, անխափան աշխատող համացանցային կապ, - նշեց դասախոսը: Խեղճության երկրորդ գործոնը ըստ Ն. Դիլբարյանի՝ մարզային բնակչության համակարգչային, թվային տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակն է, մի զգալի տոկոսի միայն հեռախոսներով ապահովված լինելը»<sup>36</sup>:

<sup>33</sup> [«ԱՅՆ ՈՒՍԱՆՈՂԸ, ՈՐԸ ՊԱՐՏԱՃԱՆԱՉ Է ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ՊԱՐՏԱՃԱՆԱՉ Է ՆԱԵՎ ԱՌՑԱՆՑ ՆԱԲԹԱԿՈՒՄ»](http://www.ygu.am). ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ([ysu.am](http://ysu.am)):

<sup>34</sup> [ԵՊՀ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԲՈՂՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ](http://www.ygu.am) ([ysu.am](http://ysu.am))

<sup>35</sup> Հանրային կարծիքի ուսումնասիրության մասնակիցների 34%-ը որպես հեռավար ուսուցման կազմակերպման հիմնական խոչընդոտ նշել է «ինտերնետի բացակայությունը/ցածր որակը»://Հանրային կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ, Եր., 2021, էջ 42:

<sup>36</sup> [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ](http://www.ygu.am) ([ysu.am](http://ysu.am))

Դասախոսների և ուսանողների կարծիքով ինտերնետի որակի ու հասանելիության խնդիրները դարձել են նաև տարբեր մանիպուլյացիաների պատճառ, հատկապես քննությունների ընթացքում: Ուսանողները, որպես պատճառ բերելով կապի որակը, մի քանի բույսերով «դուրս են եկել», պատրաստվել դասախոսի տված հարցերին ու հետո նորից «վերադարձել»: Դասախոսները նշում էին, որ նման դեպքերում վերահսկելը բավականին բարդ է եղել, որոշ դեպքերում հանգեցնելով նաև կոնֆլիկտների:

**Ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար հեռավար ուսուցման ողջ ընթացքում կարևոր է եղել նաև տարածք ունենալու խնդիրը, քանի որ մի ընտանիքից նույնիսկ երկու-երեք հեռավար դաս անողի դեպքում ի հայտ են եկել բարդություններ:**<sup>37</sup>

Հետազոտությունը, հրապարակի վրա եղած այլ նյութերի հետ համադրությամբ, բացահայտեց հեռավար ուսուցմանն անցման այս հիմնական «տեխնիկական բնույթի» խնդիրները:

Ի տարբերություն դասախոսների, ուսանողներն ավելի պատրաստված էին անցմանը տեխնիկապես, ավելի լավ էին տիրապետում համակարգչին, հեռախոսին, ժամանակակից տեխնոլոգիաներին:

Մյուս կողմից, այս առավելությունները կիրառելը ոչ միշտ էր հնարավոր, քանի որ կապի որակը, տեխնիկական միջոցների սակավությունը ազդում էին առավելությունների վրա:

Որպես կարևոր խնդիր առանձնացվել է գրադարանի մատչելիության հարցը: Գրադարանների փակ լինելը, իրոք, ազդել է կրթական գործընթացի վրա: Խնդիրը, սակայն, մասամբ ածանցյալ է այլ խնդիրներից: Այսօր արագորեն թվայնացվում են գրքեր, հոդվածներ, ժողովածուներ: Հայաստանում ռեսուրսների թվայնացման գործընթացը հաջողությամբ կազմակերպում են Ազգային գրադարանը ([www.nla.am](http://www.nla.am)), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանը ([www.flib.sci.am](http://www.flib.sci.am)): Այս և բազմաթիվ այլ կայքերում բաց մատչելիությամբ հասանելի են տասնյակ հանդեսներ, հազարավոր մենագրություններ ու հոդվածներ: Սրան ավելանում է բաց մատչելիությամբ անգլիալեզու ու ռուսալեզու ռեսուրսների ահռելի բազան: Բուհերն իրենց հերթին են

---

<sup>37</sup> Հանրային կարծիքի ուսումնասիրության մասնակիցների 12%-ը որպես հեռավար ուսուցման կազմակերպման հիմնական խոչընդոտ նշել է «առանձնանալու հնարավորության բացակայությունը»://Հանրային կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ, Եր., 2021, էջ 42:

ակտիվորեն թվայնացնում դասագրքերն ու կրթական գործընթացի այլ անհրաժեշտ նյութերը: Վանաձորի համալսարանի կայքն «Էլեկտրոնային գրադարան» բաժինը, որն առաջարկում է մեծ թվով ուղղություններ ու հասանելի է գրանցումից հետո: Գրանցվածների թիվն ավելի քան 1200 է: ԵՊՀ-ն [www.publishing.y-su.am](http://www.publishing.y-su.am) հարթակում տեղադրում է իր հրատարակությունները, մեծ մասը բաց մատչելիությամբ և ազատ ներբեռնման հնարավորությամբ: Այսպես, վերջին այցելության պահին էջում տեղադրված էր Հ. Ավանեսյանի 2021թ. հրատարակված «Փորձարարական հոգեբանությունը» դասագիրքը՝ ներբեռնման հնարավորությամբ, բազմաթիվ այլ դասագրքեր, հրատարակված դարձյալ 2021թ.: Հարթակի «Դասագրքեր» բաժինը բաշխված է ըստ ֆակուլտետների/մասնագիտությունների և յուրաքանչյուրում կա առնվազն երկու-երեք տասնյակ ձեռնարկ, մեծ մասը՝ ներբեռնման հնարավորությամբ: Հավելենք, որ ուսանողներն էլ հերթին նշում էին, որ դասախոսները մեծ թվով նյութեր են տեղադրել կայքում:

Այսինքն, մասնագիտական գրականության մատչելիության հարցերը պետք է դիտարկել մի քանի հարթությունում: Որոշ դասագրքեր կամ նյութեր, իսկապես, կարող են հասանելի չլինել, սակայն, որպես կանոն, բաց մատչելիության ռեսուրսներ գտնել հնարավոր է:

Օբյեկտիվ է տեխնիկական բարդությունների հետ կապված պնդումը: Նախ, ոչ բոլոր ուսանողներն են իրենց հարմարավետ «զգում» էլեկտրոնային տեքստերի հետ: Երկրորդ, էլեկտրոնային գրադարան ստեղծելու համար հարկավոր է ունենալ անհատական համակարգիչ, ինչը հասանելի է ուսանողների փոքր մասին:

Այս ամենից բացի կա տեղեկացվածության խնդիրը: Հետազոտությունը ցույց տվեց, որ հաճախ մանրամասն չեն ներկայացվում ռեսուրսների էլեկտրոնային շտեմարանները, ուսանողները բավարար չափով տեղեկացված չեն դրանց գոյության մասին:

#### Գ. Կրթության որակ և մատչելիություն:

Հետազոտության համար որպես մեկնակետ վերցվել է կանխավարկածը, ըստ որի համակարգային խնդիրներ առկա են բարձրագույն կրթություն գրեթե բոլոր բաղադրիչներում՝ բուհերի կառավարում և կառավարման մարմինների ձևավորում, կրթական գործընթաց, բուհական ինքնավարություն, շարժունություն, մոտիվացիա, այլ բաղադրիչներ:

Ըստ այդմ, համավարակի ազդեցությունները նույնպես պետք է դիտարկվեն մի կողմից համակարգային խնդիրների համատեքստում «...Նաև համալսարանների մարդկային կապիտալը վատ օգտագործելու արդյունքում Հայաստանն այսօր հայտնվել է հետընթացի արատավոր շրջանում: Ժամանակին վատ գաղափարներ ենք առաջարկել, որոնց հիման վրա իրականացրել ենք վատ քաղաքականություն: Դա էլ իր հերթին՝ բերել է վատ արդյունքների: Եթե ունենք վատ արդյունքներ, ապա շատ դժվար է դրանցից դուրս բերել լավ գաղափարներ:»<sup>38</sup>

Սա ընդհանրացված բնութագիր է, որ ներառում է մեծ ու փոքր բաղադրիչներ:

Հետազոտությունը, ընդհանուր գծերով, հնարավորություն տվեց արձանագրել, որ և՛ դասախոսների և՛ ուսանողների մեծ մասի միջավայրում հեռավար ուսուցմանն անցումը «շարունակել» է առկա իրողությունները, երբ բովանդակության խնդիրներն առաջնային չեն համարվել, դրսևորվել են նույն համակարգային բացերը, որոնց լուծումը բարձրագույն կրթության բարեփոխումները չեն ապահովել:

Դասախոսների համար փոփոխությունները նշանակում են նաև լրացուցիչ ջանքեր, կրթական տարբեր մեթոդների զուգակցում, ավանդականից բացի այլ կրթական հարթակների օգտագործում: Սա բարդ է, որովհետև աշխատավարձերը բուհերում ցածր են, գրեթե բացակայում է մրցակցությունը, երիտասարդ մասնագետների համար դասախոսական աշխատանքը հեռանկարային չէ: Ասվածը չի տարածվում բոլոր դասախոսների ու դասընթացների վրա, սակայն այն բուհական կրթությունը բնութագրող հիմնական միտումներից է: «Կրթության որակը հեռավարի ընթացքում կախված է նաև դասախոսից: Մարդ կար, զումից դուրս էլ ուսանողների հետ լրացուցիչ դասեր էր անում: Դասախոսներ էլ կան 80 թույլից դուրս բան չեն անում, էլ չասենք, որ տեխնիկապես էլ մի 15 թույլն գնում էր միանալու վրա»: Սա ընդհանրացված գնահատական է: Նույն գնահատականը տվել է նաև ԿԳՄՍ նախարար Վ. Դումանյանը, երբ դեռ ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանն էր. «Այս գործընթացի հետ կապված շատ հարցեր կան, որոնք հստակ պարզաբանման կարիք ունեն: Նախ հստակ սահմանում չկա, թե որն է հեռավար ուսուցումը, չկա որևէ ուղեցույց, չկան չափանիշներ, գնահատման չափորոշիչներ և այլն: Այլ խնդիր է, որ մենք այժմ փորձում ենք ուսանողների հետ կապը պահել, բայց այդ գործընթացն անվանել հեռավար ուսուցում, ճիշտ չէ: Սա կրթության ապահովում չէ: Գուցե անվանենք քննարկում, բայց ոչ դասընթացի կազմակերպում: Հեշտ է ուսանողներին ասել՝ հեռավար սովորեք, բայց

<sup>38</sup> Ս. Խաչատրյան, Համալսարանները որպես կոլեկտիվ գիտելիքի հարթակներ// [Համալսարանները՝ որպես կոլեկտիվ գիտելիքի հարթակներ \(168.am\)](#)

*ի՞նչ սովորեն, ինչպե՞ս սովորեն: Հետո ինչպե՞ս ենք քննելու նրանց, ինչպե՞ս ենք գնահատելու: Ով ի՞նչ պարտավորություններ և իրավունքներ ունի այս գործընթացը կազմակերպելիս: Պարտավո՞ր է ուսանողը մասնակցել հեռավար դասընթացին, եթե տանը համացանցը հասանելի չէ: Նույն հարցն առաջանում է նաև դասախոսի դեպքում: ...Բհարկե, այս խնդիրները միայն ԵՊՀ-ին չեն վերաբերում: Տարբեր երկրներում կա այս խնդիրը: Մա գլոբալ կրթական խնդիր է՝ կապված պանդեմիայի հետ:»<sup>39</sup>*

Հետազոտությունը հնարավորություն տվեց բացահայտել նաև տարբերություններ ըստ մասնագիտությունների, որոնք կապված են առաջին հերթին սեփնարների, լաբորատոր պարապմունքների բնույթի հետ:

Հումանիտար և հասարակագիտական ֆակուլտետներում, օրինակ, լուրջ սահմանափակումներ չեն առանձնացվել, քանի որ և դասախոսությունները և հատկապես սեմինար պարապմունքները չեն ենթադրել աշխատանք լաբորատորիաներում, փորձեր և այլն: Պատմության ֆակուլտետում, օրինակ, նշվել է, որ բակալավրի ու մագիստրոսական կրթական ծրագրերում՝ «Մշակութաբանություն», «Հայ արվեստի պատմություն և տեսություն», «Հնագիտություն և ազգագրություն» մինչև համավարակը պրոյեկտորները, այլ տեխնիկական միջոցները պարտադիր էին: Հետևաբար, ավելի հեշտ է եղել անցումը կազմակերպելը և հիմնական խնդիրները վերաբերել են դասախոսների տեխնիկական գրագիտությանը, կապի որակին, որոնցից որոշները հաղթահարվել են, իսկ որոշները այդպես էլ մնացել են: Առաջին ամիսներին հեռավար կազմակերպվող նիստերի ընթացքում (դեկանատի, գիտական խորհրդի) դասախոսների հիմնական մասը հենց այս խնդիրներն է առանձնացրել. կապի որակ, մատչելիություն, դասընթացը հեռավար կազմակերպելու համար անձնական տարածության սահմանափակություն, բացակայություններ և այլն:

*«Որոշ առավելություններ համակարգն ունի: Լսարանների տեխնիկական հագեցվածության բացակայության պայմաններում կարողանում ես շատ բաներ օնլայն հարթակում կազմակերպել: Ես լսարանում մի հատ քարտեզ կարող եմ ցույց տալ, իսկ օնլայն հարթակում 10 քարտեզ կարող եմ ցույց տալ, իրենք էլ զուգահեռ նայեն: Հիմնական խնդիրը տարիքայինն է: Մեծերն օրինակ հաստատ չեն կարողանա դա նույն ակտիվությամբ անել: Հեռավարի ժամանակ շատ-շատ են բացակայությունները»:*

---

<sup>39</sup> [«ԵՍ ՉԵՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, ՈՐ ՄԵՆՔ ԱՆՑԵԼ ԵՆՔ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ. ՉԿԱ ԴՐԱ ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ: ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԱՐՏԱԿԱՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԵՐ՝ ԲԵՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ». ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ \(ysu.am\)](https://www.y-su.am/ru/press/2020/04/20/20200420-01)

Այս իրողությունը արձանագրվում է նաև ըստ ամբիոնների ու կոնկրետ դասախոսների և միաժամանակ ցույց տալիս ընդհանուր ու կոնկրետ բուհերի, ֆակուլտետների մակարդակում նախընթաց գործողությունների հաջողությունը:

*«Բուհը պետք է մինչև համավարակը պատրաստ լիներ հեռավարին անցնելուն: Տարօրինակ է, օրինակ, որ էդ գործիքներ լսարանում չես կարողանում օգտագործել: Մնարթ գրատախտակ, համակարգիչ կամ պրոյեկտոր չունենալը խնդիր է: Այսինքն պատրաստ չէինք: Բայց էն տեմպերով, որ անցան հեռավարի, էլի ահագին բան սովորեցինք»:*

Բնագիտական, մաթեմատիկական կրթություն սվող ֆակուլտետներում ու կրթական ծրագրերում խնդիրներն ավելի լուրջ են եղել և վերաբերել են լաբորատորիաներում աշխատելու, գիտափորձեր իրականացնելու, պրակտիկաների սահմանափակումներին: Ֆիզիկայի ֆակուլտետում, օրինակ, բացի առավելություններից, ներկայացվել են հետևյալ սահմանափակումները. *«Ուսուցման գործընթացի համար անմիջական շփումը շատ կարևոր է»,- նկատեց դեկանը: Ըստ Ռ. Հակոբյանի՝ խնդրի մյուս կողմն էլ հեռավար ուսուցման դեպքում ունեցած լրացուցիչ ժամանակի ոչ ճիշտ կառավարումն է: Ֆիզիկայի ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողուհի Ելենա Հակոբյանի հետ: Վերջինս նշեց, որ իրենց կուրսում սահմանված դասապրոցեսն արդեն ավարտվել է, իսկ արտակարգ դրության պատճառով հետաձգվել է միայն դասապրոցեսի մաս կազմող պրակտիկան. «Կան ֆակուլտետներ, որոնք սկզբից լրացրել են դասատախտակով սահմանված պրակտիկան, իսկ հիմա 1 ամիս տևողությամբ դասերը լրացնում են հեռավար ուսուցման մեթոդներով: Մեր դեպքում հարցի լուծումը բաց է մնում»:<sup>40</sup> Նմանատիպ խնդիրներ առանձնացվել են նաև այլ ֆակուլտետներում: Կենսաբանության ֆակուլտետում հիմնական խնդիրները հանգել են հետևյալին. *«Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի տնօրեն Կարեն Թոչունյանի տեղեկացմամբ, առցանց հարթակները, որոնց միջոցով անցկացվում են հեռավար ուսուցումը, քննարկումները, դասախոսությունները, ուսանողների աշխատանքները ներկայացնելու և վերլուծելու առումով շատ կարևոր են: «Չնայած ուսանողներն այլևս միջանկյալ քննություններ չեն հանձնելու, այնուամենայնիվ մենք փորձում ենք քննարկումների, դասախոսությունների միջոցով ներկայացնել և ստուգել ուսանողների ընթացիկ աշխատանքները, որոնք, ըստ ինձ, շատ կարևոր են»,- նշեց Կ. Թոչունյանը: Որքան էլ այս միջոցները կենտրոնի տնօրենն իրատեսական է**

<sup>40</sup> [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՖԻԶԻԿՈՍՆԵՐԸ \(ysu.am\)](http://www.zenit.am)



*դիտարկում, այնուամենայնիվ նա նշեց, որ գործնական և լաբորատոր աշխատանքները, որոնք ուսումնական գործընթացի անբաժանելի մաս են կազմում, այս եղանակով փոխարինել որևէ կերպ չի հաջողվելու»<sup>41</sup> Լաբորատոր աշխատանքների կազմակերպումը առաջնային է նաև Քիմիայի ֆակուլտետում. **«Ակնհայտ է, որ առցանց տարբերակը կիրառելի չէ լաբորատոր աշխատանքներ կատարելու համար: Սպասում ենք արտակարգ իրավիճակի ավարտին»<sup>42</sup>***

Սա միայն հայաստանյան կրթական համակարգի խնդիրը չէ: Միջազգային ուսումնասիրությունները նույնպես փաստում են, որ բարդությունների առաջ են կանգնում այն կրթական ծրագրերը, որոնցում լաբորատոր փորձերի, կիրառական հետազոտությունների կշիռը բարձր է:

Ըստ այդմ, որպես կրթության որակի ու բովանդակության վրա ազդող կարևոր գործոն դիտարկվում է որոշ մասնագիտությունների գծով փորձերի, լաբորատոր աշխատանքներ իրականացնելու անհնարիությունը: Կոնկրետ, չափելի ազդեցություններ ներկայացնելն այս դեպքում դժվար է, քանի որ պահանջվում են լրացուցիչ հետազոտություններ:

Բարդությունների ու խնդիրների հաջորդ խումբը, որ ազդել է կրթության որակի ու մատչելիության վրա, ունի նախորդող պատճառներ և կապվում է արդեն մշակված գործիքների օգտագործման հետ: Երևանի Պետական Համալսարանում, օրինակ, մինչև համավարակը [www.e-learning.y-su.am](http://www.e-learning.y-su.am) հարթակում նյութեր, դասախոսություններ տեղադրելու պարտադիր պահանջ չի եղել և նյութերը փոխանցել են հիմնականում կրիչներով կամ թղթային տարբերակով: Այս դեպքում, արագ անցումը հեռավար ուսուցմանը, չնայած խնդիրներին, կարելի է համարել դրական: Վանաձորի պետական համալսարանում փորձագիտական հարցումներն արձանագրեցին այլ պատկեր: Դեռևս մինչև համավարակը այստեղ ռեկտոր Գ. Խաչատրյանի հրամանով պարտադրվել է դասախոսությունների էլեկտրոնային տարբերակն ունենալն ու էլեկտրոնային հարթակում տեղադրելը կամ կրիչներով ուսանողներին փոխանցելը: Նույն հարթակում տեղադրված են եղել նաև գործնական առաջադրանքները: **«Մենք մի քիչ պատրաստ էին, որովհետև արդեն ունեինք դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները: Ռեկտոր Խաչատրյանը կարգադրություն է ստորագրել, որ էլեկտրոնային դասախոսությունները օնլայն տարբերակով տանք ուսանողներին կամ**

<sup>41</sup> [ՀՀ-ՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԿԱՆԻՑ ՍԿՄԱԾ՝ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԷՆԱԵՎ ԵՊՂ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ \(ysu.am\)](http://www.e-learning.y-su.am)

<sup>42</sup> [«ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՃՈՒՅՔՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԱՌՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԴԱՍԵՐԻՆ».](http://www.e-learning.y-su.am)  
[SԱՐԻԵԼ ԴՈՉԻԿՑԱՆ \(ysu.am\)](http://www.e-learning.y-su.am)

*կայքից կամ ուսանողները լաբորանտից ֆլեշով վերցրել են: Մեր համալսարանում մեծ մասն էր դասախոսություններն ունեցել է, որովհետև դա եղել է հրամանով: Ես ունեցել եմ: Մենք նաև փաթեթներ ենք կազմել՝ դասախոսություն ու գործնական տարբերակով»: Փորձագիտական հարցում, Վանաձորի պետական համալսարան:*

Կրթության բովանդակության վրա ազդեցությունները, բացի այս ընդհանուր մակարդակից, պայմանավորված են եղել նաև դասախոսների անձնական պատրաստվածությամբ: Բոլոր բուհերում մինչև համավարակը եղել են և երիտասարդ և միջին տարիքի դասախոսներ, որ այս գործիքները կիրառել են դասախոսությունների, արտասահմանյան գործընկերների հետ շփվելու առումով, հատկապես եթե ներգրավված են եղել միջազգային տարբեր ծրագրերում: Հեռավար ուսուցման անցնելուց հետո նրանք շարունակել են ակտիվորեն կիրառել այս նույն գործիքները: «Ամբիոններում էլ կախված էր դասախոսից ու լաբորանտից: Մեր ամբիոնում դասախոս կա, որ լաբորանտի օգնության կարիքը չի ունեցել: Լրիվ ինքնուրույն արել են նաև հրավիրված երկու դասախոսներ: Ակտիվ աշխատող դասախոսները էջում ֆիլմեր են դնում, վիդեոներ, հաղորդումներ: Ուսանողներին էլ մի երկու հոգի մտնում ֆայլերը քաշում է, ասում ըսենց բան կա, բայց տարածվում է հիմնականում ֆեյսբուքով կամ ինստագրամով:

*Հիմա եկած առաջին (նաև արդեն երկրորդ) կուրսերը շատ ուշադիր են հարթակի նկատմամբ: Մեծամասնությունը նայում է, որովհետև սովորել են հենց սկզբից ու չեն հիշում առանց մեյլ եղած տարբերակը: Դրական առումով երևի հիմնականը համակարգչային գիտելիքներ ու որոշներին ստիպեց մի քիչ ավելի շատ աշխատել: Դասախոսներ կան, որ հեռավարից հետո էլ շարունակում են ակտիվ պահել հարթակը»: Փորձագիտական հարցում, ԵՊՀ*

Հետազոտությունը ցույց տվեց, որ ուսանողների միջավայրում նույնպես, չնայած մոտեցումների որոշակի տարբերակվածությանը, հիմնականում նույն միտումներն են արձանագրվում:

Հեռավարին կտրուկ անցումը առաջին հերթին ազդեց ուսանողների կյանքի պլանավորման պրակտիկաների վրա: Մի մասը հանձնեց վարձով բնակարանները, վերադարձավ հայրենի բնակավայրեր ու կրթությունը, կարելի է ասել, դարձավ ավելի «բազմադեմ» ու աշխարհագրական լայն ընդգրկում ունեցող: Տեխնիկական միջոցների բացակայության, կապի հասանելիության ու որակի խնդիրները կարևորեցին կրթության ոչ թե որակը, այլ մատչելիությունը:

Այն սեզմենտները, որ կրթության որակի ու բովանդակության հանդեպ վերաբերմունքով պայմանավորված, կային մինչև համավարակը, ըստ էության

պահպանվեցին, սակայն որոշ փոփոխություններ տեղի ունեցան ներքին բովանդակության տեսանկյունից:

Եվ դասախոսները և ուսանողները հստակ արձանագրում էին, որ լավ սովորող, գիտելիքի ու բովանդակության պահանջ ձևակերպող ուսանողները այդպիսին էին նաև հեռավար ուսուցման ընթացքում. ակտիվորեն մասնակցում էին դասերին, ծանոթանում նյութերին, մշակում դրանք, մասնակցում սեմինարներին, լրացուցիչ գրականության հետ ծանոթանում և այսպես շարունակ: *«Առկայի ժամանակ սովորողը հեռավարի ժամանակ էլ սովորում էր: Երևի էս ընթացքում թույլերը ավելի ուժեղացան, քան հակառակը: Աշխատող երեխեքը չեն հասցնում զալ դասերի, նյութերի խնդիրներ ունեն: Հեռավարի ժամանակ իրա գործին զուգահեռ դասը լսում էր, ավելի հեշտ էր ստանում: Խնդիր էր օրինակ համակարգիչ չունենալը: Ուսանող ունեինք, որ հեռախոսով հավաքում էր, ուղարկում ինձ, էս ֆայլ էի սարքում, ուղարկում իրեն, որ ուղարկի դասախոսներին»:* Փորձագիտական հարցում, ԵՊՀ

Փոփոխություններն ու կրթության որակի անկումը ավելի արտահայտված են ուսանողության մնացած հատվածի մոտ: Եվ հետազոտությունները և դիտարկումները ցույց են տալիս, որ ուսանողության մի հատվածի համար բարձրագույն կրթություն ստանալը ամեննին չի ասոցացվում որակյալ կրթության, մրցունակության ու այլ իրողությունների հետ: Ըստ բուհերի ու մասնագիտությունների, բնականաբար, տարբերություններ կան, սակայն սա ընդհանուր միտում է: Այս խմբի համար հիմնական խնդիրը սովորելով ու այլ եղանակներով դիպլոմ ստանալու համար անհրաժեշտ նվազագույնը միավորներ ու ՄՈԳ ապահովելն է: Այսօր էլ տղաներից որոշները (քննարկումների ժամանակ այդ մասին ասվել է բաց տեքստով), ցանկանում են դիպլոմ ունենալ ուժային կառույցներում (ԱԱԾ, Ոստիկանություն) աշխատանքի անցնելու համար: Աղջիկների համար ապագայի հնարավորություններն ավելի սահմանափակ են և սահմանափակվում են դպրոցով կամ «կնոջը հարմար աշխատանք ունենալով»

Կարևոր արձանագրում է նաև այն, որ կրթության որակի անկումը սկսվել էր մինչև հեռավար ուսուցումը. *«Որակը մինչև էդ էլ սկսել էր ընկնել, մինչև հեռավարը: Կան քիչ լավ սովորողներ, շատ վատ սովորողներ, իսկ միջինը քիչ է: Հեռավարը խորացրեց: Գլուխ պահող մասսան կարողացավ ավելի հեշտ ստանալ ու գնալ էդ ճանապարհով: Ինձ թվում է, լավ սովորողները շահեցին, որովհետև շատ ժամանակ ունեցան սովորելու համար: Բայց հետո իրենք էլ հոգնեցին ու սկսեցին ասել, որ զան դասի»:* Փորձագիտական հարցում, ԵՊՀ

## Ամփոփում

Բարձրագույն կրթության վրա համավարակի ազդեցության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ներկայացնել որոշ եզրակացություններ.

1. Քովիդ համավարակի ազդեցությունը մեծ է բարձրագույն կրթության համակարգի վրա աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Հազարավոր համալսարաններ բախվել են որակապես նոր պայմաններում կրթական գործընթացը կազմակերպելու տարբեր խնդիրների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդիրներից գերծ չեն մնացել նույնիսկ ֆինանսական, տեխնիկական ու այլ տեսանկյուններից առաջատար դիրքեր ունեցող համալսարանները: Համավարակի ազդեցությունները չեն սահմանափակվում միայն կարճաժամկետ ազդեցությամբ: Կրթության բնականոն ընթացքի վերականգնումից հետո էլ համավարակի ազդեցությունները դրսևորվելու են միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ազդելով կրթական ստրատեգիաների և պրակտիկաների վրա:

2. Բարձրագույն կրթությունը Հայաստանում նույնպես ենթարկվել է համավարակի բազմաբաղադրիչ ազդեցություններին: 2020թ. մարտից սկսած հայաստանյան բուհերը անցան հեռավար ուսուցման, որպես հիմնական նպատակ ունենալով կրթական գործընթացի անընդհատությունն ապահովելը: Հետազոտությունը, նյութերն ու ուսումնասիրություններն ցույց տվեցին, որ բուհերի մեծ մասը, տարբեր գործոններով պայմանավորված, պատրաստ չէր նման կտրուկ անցմանը: Սա է հիմնական պատճառներից մեկը, որ կրթության որակի, բովանդակության խնդիրները, առավել ևս համավարակը որպես հնարավորություն օգտագործելով փոփոխությունների իրագործելու խնդիրները հեռավար ուսուցման ընթացքում հիմնականում մղված էին երկրորդ պլան:

3. Հեռավար կրթության գնահատականները նույնպես հակասական են: Դասախոսներն ու ուսանողները, ընդունելով հեռավար ուսուցման որոշ առավելությունները, գտնում են, որ այն դեռևս չի կարող փոխարինել այն մեթոդներին, որ կիրառվում էին մինչև համավարակը:

4. Հեռավար կրթության կարևոր առավելություններից մեկը նոր կամ արդեն գոյություն ունեցող հարթակների ակտիվ օգտագործումն է, տեղեկատվության արագ փոխանցման հնարավորությունը, ժամանակի ու ռեսուրսի խնայողությունը, տեխնիկական գրագիտության բարձրացումը:

Բացասական գործոնների շարքում, ի թիվս այլոց, կարևոր են հոգեբանական բնույթի գործոնները. շփումների սահմանափակություն, սոցիալական կապերի խզում,

այլ խնդիրներ:

4. Հետազոտությունը ցույց տվեց, որ չնայած կրթական գործընթացի անընդհատության ապահովմանը, հեռավար կրթության ընթացքում արձանագրվել է կրթության որակի անկում: Լավ սովորող ուսանողներից շատերը, որ այդպիսին են եղել մինչև համավարակը, հեռավար ուսուցման հնարավորություններից օգտվելով, պահպանել ու զարգացրել են ունեցած առավելությունները: Սովորելու մոտիվացիա չունեցող, հիմնականում դիպլոմի համար ընդունված ուսանողները, ընդհակառակը, օգտվել են հեռավար ուսուցման սուբյեկտիվ «առավելություններից», ապահովել գնահատականներ, սակայն ոչ գիտելիք, ըստ այդմ սահմանափակելով առանց այն էլ սահմանափակ հնարավորությունները:

5. Ռազմավարական տեսանկյունից հետազոտության կարևոր արձանագրումներից է այն, որ բարձրագույն կրթության համակարգը, որպես ամբողջություն, բավարար պատաստվածություն չունի արտակարգ իրավիճակներին արձագանքելու՝ կրթության որակի ու մատչելիության պարամետրերի կարևորմամբ: Կրթության կազմակերպիչների և բուհերի արձագանքը համավարակին ու հեռավար ուսուցմանն անցմանը, ըստ էության, իրավիճակային էր: Բավարար չէին ինստիտուցիոնալ, համակարգային լուծումները, մասնագիտական ուղղորդումները, կարծիքների հավաքագրման, մասնակցայնության ապահովման, գործընթացի ընթացիկ գնահատման մեխանիզմները: Հեռավար կրթության ընթացքում և հետո գրեթե չեն եղել անմիջական շահառուներից՝ ուսանողներ, դասախոսներ, կարծիքներ հավաքելու ու ըստ այդմ հեռավար կրթության մեխանիզմները կատարելագործելու նախաձեռնություններ: Այս իրավիճակը, պայմանավորված լինելով հեռավար ուսուցմամբ, միաժամանակ ցույց է տալիս խնդիրների այն համախումբը, որ առկա է բարձրագույն կրթության համակարգում: Հետազոտության ներածությունում որպես կանխավարկած դիտարկված թեզը, համաձայն որի հայաստանյան բարձրագույն կրթության խնդիրները համակարգային են, ևս մեկ անգամ ապացուցվեց նաև սույն հետազոտությամբ:

6. Որպես ամփոփում նշենք, որ հեռավար ուսուցումը՝ որպես բարձրագույն կրթության համար նոր հարթակ, կարիք ունի լրացուցիչ հետազոտությունների, համակողմանի վերլուծությունների ու ընդհանրացումների, որոնք հնարավորություն կտան ավելի կիրառել հեռավար ուսուցման այն առավելությունները, որոնք բացահայտվել ու վերլուծվել են հետազոտությունում:

## Առաջարկություններ

Ուսումնասիրության արդյունքում առաջարկությունները ինչպես ընդհանուր են, որ վերաբերում են բարձրագույն կրթությանն ընդհանրապես, այնպես էլ ավելի կոնկրետ ու առարկայական, ուղղված շահառուների առանձին խմբերի:

1. ՀՀ ԿԳՄՄՆ նախարարությունում, բուհերի հետ համագործակցությամբ և վերջիններիս առաջարկությունները հաշվի առնելով, հարկավոր է մշակել **«Հեռավար ուսուցման հայեցակարգ»**, որի հիմքում պետք է ընկած լինի համաշխարհային կրթական տարածության՝ համավարակով պայմանավորված հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց հաղթահարման մեխանիզմների վերլուծությունը՝ համադրված հայաստանյան փորձառության ու զարգացումների հետ: **(առաջարկության հիմնական շահառուներ՝ ԿԳՄՄՆ, ԲՈՒՀ-երի համապատասխան ստորաբաժանումներ):**

2. Կրթական համակարգի զարգացման միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջիկա տարիներին փոփոխության է ենթարկվելու ուսանողների շարժունության «աշխարհագրությունը»: Ընդունող շատ երկրներ, ֆինանսական ու այլ խնդիրներով պայմանավորված, կրճատելու են արտասահմանցի ուսանողների թիվը: Հայաստանում արտասահմանցի ուսանողներ ներգրավելու դրական փորձ ունեն գերազանցապես բժշկական կրթությունն ապահովող բուհերը, մասնավորապես՝ Երևանի պետական բժշկական համալսարանը: Հեռավար/հիբրիդային ուսուցում առաջարկող ծրագրերը, հատկապես մագիստրոսի որակավորում ապահովող, կարող են ուսանողների լրացուցիչ հոսքեր ներգրավել, եթե ապահովվի որակն ու մրցունակությունը: Շահեկան դիրքում կարող են հայտնվել նաև հեռավար/հիբրիդային ուսուցում առաջարկող միկրոմագիստրոսական ու բակալավրի կրթական ծրագրերը: Հայաստանում այս մոտեցումը կարող է հեռանկարային լինել, եթե նկատի ունենանք Սփյուռքի այն հայրենակիցներին, ովքեր կցանկանային կրթություն ստանալ Հայաստանում, համատեղելով աշխատանքը, բիզնեսը կամ շարունակելով բնակվել հիմնականում Հայաստանից դուրս: Այս տեսանկյունից արդյունավետ կարող են լինել նաև համատեղ մագիստրոսական ծրագրերը: **(առաջարկության հիմնական շահառուներ՝ ԲՈՒՀ-եր, ակադեմիական հաստատություններ):**

3. Բուհերի մակարդակում պետք է մշակվեն «Հեռավար ուսուցման» սեփական՝ բուհի ու առանձին մասնագիտությունների պահանջներին համապատասխանեցված ծրագրեր կամ կանոնակարգեր: Ուսուցման հիբրիդային տարբերակն, օրինակ, կարող է հեռանկարային լինել տեխնիկական մասնագիտությունների, կենսաբանության, քիմիայի, երկրաբանության ու այլ ֆակուլտետների ուսանողների համար, որտեղ հնարավոր չէ արդյունավետ ուսուցում առանց լաբորատոր աշխատանքների: Այս

դեպքում տեսական դասընթացները կկազմակերպվեն հեռավար, իսկ լաբորատոր աշխատանքները՝ ուսանողին ու դասախոսին հարմար ժամանակացույցով, ըստ այդմ թեթևացնելով նաև լաբորատորիաների ծանրաբեռնվածությունը:

Հասարակական և հումանիտար մասնագիտությունների գծով հեռավար կարող են կազմակերպվել առանձին դասընթացներ, զուգակցելով ուսուցման այլ մոդելների հետ: **(առաջարկության շահառուներ՝ ԲՈՒՀ-եր, ֆակուլտետներ, ամբիոններ):**

4. Առանձին մասնագիտությունների գծով հիբրիդային կամ կրթական ծրագրերում հեռավար դասընթացների ներառմամբ ուսուցումը կարող է արդյունավետ լինել մագիստրատուրայի մակարդակում, քանի որ այս մակարդակում մինչև հեռավար ուսուցում կազմակերպելն արդեն գոյություն ունեն ուսանողների մեծ մասի աշխատելով պայմանավորված հաճախումների խնդիր: Մագիստրատուրան ենթադրում է գիտահետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում և ըստ այդմ հեռավար դասընթացներում կարող են շեշտադրվել ինքնուրույն աշխատանքը, հետազոտությունները, առցանց աշխատանքի հնարավորություններ տվող այլ մեխանիզմներ: **(առաջարկության շահառուներ՝ ֆակուլտետներ, ամբիոններ):**

5. Հարկավոր է զարգացնել ու խորացնել այն դրականը, որ ձեռք է բերվել հեռավար ուսուցման ընթացքում՝ տարբեր հարթակների ակտիվ օգտագործման հետ կապված: Այս նպատակով բուհերում պետք է կազմակերպվեն դասընթացներ, վերապատրաստումներ ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար: Հետազոտությունը թույլ տվեց արձանագրել, որ չնայած տեխնիկական պատրաստվածության առաջընթացին, շատ են խնդիրները հատկապես տարբեր գործիքների օգտագործման հետ կապված: Վերապատրաստումները, որոնց նպատակը պետք է լինի գրագիտության բարձրացումը, հնարավորություն կտան աստիճանաբար նվազեցնել վերապահ վերաբերմունքը հեռավար կամ հիբրիդային ուսուցման նկատմամբ: **(առաջարկության շահառուներ՝ ֆակուլտետների գիտական, մեթոդական խորհուրդներ, բուհերի՝ վերապատրաստումների համար պատասխանատու ստորաբաժանումներ, ուսանողական խորհուրդներ, ուսանողական գիտական ընկերություններ):**

6. Անհրաժեշտ վերապատրաստումներից, կանոնակարգերի ու ուղեցույցների մշակումից հետո հարկավոր է յուրաքանչյուր բուհում մշակել (եթե այդպիսիք կան, ինչպես օրինակ ԵՊՀ-ում, ապա ավելացնել) հեռավար ուսուցում առաջարկող կրթական մոդուլները: Սա կարող է խթան հանդիսանալ նաև միջբուհական կամ միջմասնագիտական համագործակցության համար, հատկապես որ Բոլոնիայի

գործընթացը նախատեսում է այլ բուհերից կամ կրթական ծրագրերից առանձին դասընթացներ ընտրելու հնարավորություն: **(առաջարկության շահառուներ՝ ֆակուլտետներ, ամբիոններ, կրթական ծրագրերի պատասխանատուներ):**

7. Բուհերի ու ֆակուլտետների մակարդակում պետք է առանձնացվեն հեռավար ուսուցման պատասխանատուներ, ովքեր պետք է մասնակցեն հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կանոնակարգմանը: **(առաջարկության շահառուներ՝ բուհեր, ֆակուլտետներ):**

8. Նշված գործողություններից բացի, կարևոր նշանակություն ունի հեռավար ուսուցման արդյունքների, ազդեցությունների ու հետևանքների համալիր ուսումնասիրության կազմակերպումը, արդյունքների հանրային քննարկումը բոլոր շահառուների ակտիվ մասնակցությամբ: **(առաջարկության շահառուներ՝ ԿԳՄՄՆ, բուհեր, ոլորտային կառույցներ, քաղ. հասարակության ներկայացուցիչներ):**

#### Աղբյուրներ և գրականություն

1. [«ԱՅՆ ՈՒՍԱՆՈՂԸ, ՈՐԸ ՊԱՐՏԱՃԱՆԱԶ Է ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ՊԱՐՏԱՃԱՆԱԶ Է ՆԱԵՎ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ».](#) ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ([ysu.am](#)):
2. Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. ատկա խնդիրների վերլուծություն/ Հաշվետվությունը պատրաստվել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության համար. ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն Բուդապեշտ, հուլիս 2013թ.// [Microsoft Word - OSF HE report ARM 2 .doc](#):
3. Բարձրագույն կրթության հիմնախնդիրները Հայաստանում/Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2016, 62 էջ// [Higher Education Problems Perspectives.pdf](#):
4. Գաբրիելյան Մ., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ//[Բոլոնիայի-գործընթաց.-ուսանողակենտրոն-համակարգ-ՀՀ-երեք-ԲՈՒՀ-ի-օրինակով.pdf](#) ([osf.am](#)):
5. [«ԵՍ ՉԵՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, ՈՐ ՄԵՆՔ ԱՆՅԵԼ ԵՆՔ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ. ՉԿԱ ԴՐԱ ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ: ՄԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԱՐՏԱԿԱՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԵՐ՝ ԲԽՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ».](#) ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ ([ysu.am](#)):
6. [ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ](#) ([ysu.am](#)); [Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ](#) ([ysu.am](#)):
7. [ԵՊՀ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՒՄ Է ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ](#) ([ysu.am](#)):
8. [ԵՊԲՀ հնդիկ ուսանողները Հայաստանում, համավարակի ընթացքում](#) ([hetq.am](#)):
9. Խաչատրյան Մ., Երբ կրթության միակ ձևը դառնում է հեռավարը: [Երբ կրթության միակ ձև է դառնում հեռավարը](#) ([168.am](#)):



10. Խաչատրյան Ս., Դիտարկումներ ուսանողների վարքագծի վերաբերյալ// [Դիտարկումներ ուսանողների վարքագծի վերաբերյալ \(168.am\)](#):
11. Խաչատրյան Ս., Համալսարանները որպես կոլեկտիվ գիտելիքի հարթակներ// [Համալսարանները՝ որպես կոլեկտիվ գիտելիքի հարթակներ \(168.am\)](#):
12. Հայաստանի Հանրապետության Կառավարության 3 հուլիսի 2020 թվականի N-1125-Ն որոշումը «ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»//<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144080>:
13. Հայաստանի Հանրապետության 2020թ. մարտի 6-ի Օրենքը «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»// <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140533>:
14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021//[99526838.pdf \(armstat.am\)](#):
15. Հանրային կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գերակա ոլորտների վերաբերյալ, Եր., 2021:
16. [Հեռավար կրթության կազմակերպումը COVID 19-ի պայմաններում | Heinrich Böll Stiftung | Tbilisi - South Caucasus Region \(boell.org\)](#):
17. [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՊՀ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼ Է ՆՈՐ ԳՈՐԾԻՔ \(ysu.am\)](#):
18. [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԸ \(ysu.am\)](#):
19. [ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՖԻԶԻԿՈՍՆԵՐԸ \(ysu.am\)](#):
20. [ՀՀ-ՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԿԱՆԻՑ ՍԿՍԱԾ՝ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՆԱԵՎ ԵՊՀ ԿԵՆՏՐԱԼՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ \(ysu.am\)](#):
21. ՀՀ Օրենքը «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին (նախագիծ)», էջ 34-35// [16448467377551.docx \(live.com\)](#):
22. [ՀՊՄՀ-ում ուսումնական գործընթացը շարունակվում է առցանց ASPU Classroom հարթակում](#):
23. Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն//Համաշխարհային Բանկ, CRRC, Եր, հուլիս, 2020;
24. Ուղեցույց բուհերին առցանց ուսուցումը որակի ապահովման չափանիշներին համապատասխան կազմակերպելու համար, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, Եր., 2020, էջ 2:
25. [«ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՃՈՒՑՔՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԱՌՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԴԱՍԵՐԻՆ». ՏԱՐԻԵԼ ԴՈՉԻԿՅԱՆ \(ysu.am\)](#):
26. Дж. Маринони, Х. ван’т Ланд, Влияние COVID-19 на мировое высшее образование//МВО, Специальный выпуск 102, В Мире, էջ 8-9:
27. Влияние пандемии COVID-19 на сектор высшего образования и магистратуру: международный, национальный и институциональный ответ, Москва, 2020:
28. Covid-19 and higher education: today and tomorrow (impact analysis, policy responses and

- recommenadations)//UNESCO, IESALC, May, 2020:
29. Farnell, T., Skledar Matijević, A., Šćukanec Schmidt, N., The impact of COVID-19 on higher education: a review of emerging evidence, NESET report, Luxembourg: Publications Office of the European Union. 2021, doi: 10.2766/069216:
  30. One year into COVID: Prioritizing education recovery to avoid a generational catastrophe Report of UNESCO online conference 29 March 2021:
  31. SOCIO-ECONOMIC IMPACT ASSESSMENT OF THE COVID-19 OUTBREAK IN ARMENIAN COMMUNITIES//UNDP, Armenia, 2020:
  32. The impact of Covid-19 on European higher education (Michael Gaebel, Henriette Stoeber)//SURVEY OF NATIONAL RECTORS' CONFERENCES – AUTUMN/WINTER SEMESTER 2021/22, The European University Association, November, 2021:
  33. THE STATE OF THE GLOBAL EDUCATION CRISIS: A PATH TO RECOVERY, A JOINT UNESCO, UNICEF, AND WORLD BANK REPORT, 2021:
  34. The COVID-19 Crisis Response: Supporting tertiary education for continuity, adaptation, and innovation, World Bank. Retrieved on 20 August 2020: [The-COVID-19-Crisis-Response-Supporting-Tertiary-Education-for-Continuity-Adaptation-and-Innovation.pdf \(worldbank.org\)](#):
  35. The impact of the Covid-19 Pandemic on education financing, May, 2020, The World Bank Group: